ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2017 – 2018 ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

§ 1. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների ընդհանուր նկարագիրը 4

§2. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից 24

2.1. Շրջանավարտների գնահատականների ընդհանուր նկարագիրը 24

2.2. Շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտական կարողություններից 29

2.3. Շրջանավարտների բավարարվածությունը տեսական գիտելիքներից 32

2.4. Շրջանավարտների բավարարվածությունը գործնական հմտություններից 34

2.5. Շրջանավարտների բավարարվածությունը օտար լեզուների իմացությունից 38

2.6. Շրջանավարտների բավարարվածությունը հաճախած դասընթացների օգտակարությունից 41

2.7. Շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկաների օգտակարությունից 43

2.8. Շրջանավարտների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից 47

2.9. Շրջանավարտների բավարարվածությունը ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից 50

2.10. Շրջանավարտների բավարարվածությունը ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից 53

2.11. Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից 56

§3. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից 59

3.1. Բավարարվածությունը լսարանային պայմաններից 61

3.2. Բավարարվածությունը համակարգչային սրահներից 64

3.3. Բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից 67

3.4. Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից 70

3.5. Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից 74

3.6. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ գրադարանից 77

3.6.1. Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց 77

3.6.2. Բավարարվածությունը գրադարանի կահավորանքից 81

3.6.3. Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից 85
§4. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ի միջավայրից.....89
4.1. Գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից 91
4.2. Գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից 94
4.3. Գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից 97
4.4. Գոհունակությունը ուսանողական կառույցներից 99
4.5. Գոհունակությունն ուսանողներին արձագանքելու ընթացակարգից 103
4.6. Կոռուպցիայի հնարավոր դրսևորումները 107
§5. ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը.....114
Ամփոփում 121

§ 1. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների ընդհանուր նկարագիրը

Տվյալ Հաշվետվության մեջ փորձ է արվում ներկայացնել 2017-2018 թ.թ. և 2018-2019 թ.թ. շրջանավարտների[1] գնահատականների համեմատական վերլուծություն։ Սակայն 2018-2019 թ.թ. շրջանավարտների ընտրանքային համախմբությունը թույլ չի տալիս խոսել ընտրանքի ներկայացուցչության մասին։ Աղյուսակ 1-ում և 2-ում ներկայացված են համապատասխանաբար տվյալներ՝

- ***պաշտոնական*** ՝ 2018 թ. և 2019թ. շրջանավարտների կառուցվածքի մասին,
- ***ընդհանուր տվյալներ,*** որոնք առկա են ***ամբողջական բազայում,***
- ***միայն հարցերին պատասխանած (հարցմանը մասնակցած)*** 2018 թ. և 2019թ. շրջանավարտների տվյալներ։

Ինչպես տեսնում ենք, ըստ պաշտոնական տվյալների 2018 թ. շրջանավարտների թիվը կազմել է **4525** շրջանավարտ, մինչդեռ բազայում շրջանավարտների թիվը կազմել ե **4599** հոգի, ինչը **74** շրջանավարտով *ավել է* պաշտոնական տվյալից /տե՛ս Աղյուսակ 1/։

- Այդ ֆենոմենը մի գուցե կապված է բանակից վերադարձած ուսանողների հետ, սակայն դա նշանակում է, որ պաշտոնական բաշխումներն ըստ տարբեր բնութագրիչների (սեռ, տարիք, կրթական աստիճան և այլն) կարող են տարբերվել իրական պատկերից։

Նույն անհասկանալի իրավիճակը կրկնվում է նաև 2019 թ. շրջանավարտների բազայի համար[2]։ Այս դեպքում արդեն **40** շրջանավարտներով բազայի միավորների թիվը *գերազանցում է* պաշտոնական շրջանավարտների թվից (շրջանավարտների պաշտոնական թիվը՝ **4578** է, իսկ ընդհանուր բազայում՝ **4618** հոգի է) /տե՛ս Աղյուսակ 2/[3]։

---

[1] Այսուհետ 2017-2018 ուս. տարվա շրջանավարտները ներկայացվելու են, որպես «2018թ. շրջանավարտներ», իսկ 2018-2019 ուս. տարվա շրջանավարտները՝ «2019 թ. շրջանավարտներ»։

[2] Նշենք, որ պաշտոնական տվյալներում առկա է գումարի սխալ հաշվարկ. առկա համակարգով սովորած շրջանավարտների թիվը գրված է 3706, մինչդեռ իրական գումարը կազմում է 3723։

[3] Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում կանաչ գույնով նշված են այն ֆակուլտետները, որոնց համար շրջանավարտների վերաբերյալ պաշտոնական տվյալները ավելի պակաս են, քան համակարգչային բազայում առկա տվյալները

Ինչ վերաբերում է ***իրական*** հարցվողների թվին, ապա **2018 թ.** շրջանավարտների համար հարցմանը մասնակցել են **4299** հարցվող, ինչը կազմում է գլխավոր համախմբության 95 %-ը: Բացի այդ ընտրանքային համախմբության տարբերությունը գլխավոր համախմբությունից ըստ ֆակուլտետներ կազմում է ոչ ավել, քան 0,5%, իսկ ընտրանքի սխալը հավանականային ընտրանքի դեպքում չի գերազանցի 0,004%:

Այլ իրավիճակ է **2019 թ**. տվյալների հետ: Հարցմանը մասնակցել են ընդամենը **1597** շրջանավարտ, ինչը կազմել է գլխավոր համախմբության 34,8%-ը: Ըստ այդմ տվյալ հետազոտության տվյալների ներկայացուցչությունն ընդհանրապես ապահովված չէ, և ընտրանքը կարելի է բնութագրել, որպես ընդամենը *ցանկություն ցուցաբերած կամավոր շրջանավարտներին* /ստորև կնկարագրվի նաև այդ համախմբությունը/[4]:

Հարցվածների բաշխումն ըստ ֆակուլտետների ցույց է տալիս, որ կամավորների բաշխումն ըստ ֆակուլտետների շեղված է և որոշ ֆակուլտետների հարաբերություններն ամբողջի մեջ շեղվում են ավելի քան 9,5%-ով, մասնավորապես՝ ***Եվրոպական լեզուների*** ֆակուլտետի շրջանավարտների համար (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 1

2018թ. շրջանավարտների բաշխումն ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը
	Գլխավոր համախմբությունում		**Ընդհանուր բազայում**		**Իրական ընտրանքում**	

[4] Աղյուսակ 2-ում կարմիր գույնով նշված են այն ֆակուլտետները, որոնց համար կառուցվածքը ընտրանքային համախմբությունում և գլխավոր համախմբությունում տարբեր է :

1	Մաթեմատիկայի և մեխանիկայի	210	4.6%	216	4.7%	188	4.4%
2	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	236	5.2%	246	5.3%	231	5.4%
3	Ֆիզիկայի	110	2.4%	111	2.4%	109	2.5%
4	Ռադիոֆիզիկայի	141	3.1%	141	3.1%	135	3.1%
5	Քիմիայի	42	0.9%	42	0.9%	42	1.0%
6	Կենսաբանության	116	2.6%	116	2.5%	101	2.3%
7	Աշխարհագրության և երկրաբանության	337	7.4%	340	7.4%	340	7.9%
8	Պատմության	347	7.7%	351	7.6%	298	6.9%
9	Միջազգային հարաբերությունների	543	12.0%	547	11.9%	490	11.4%
10	Տնտեսագիտության և կառավարման	411	9.1%	428	9.3%	412	9.6%
11	Փիլիսոփայության և հոգեբանության	177	3.9%	178	3.9%	172	4.0%
12	Սոցիոլոգիայի	160	3.5%	164	3.6%	157	3.7%
13	Հայ բանասիրության	190	4.2%	198	4.3%	167	3.9%
14	Ժուռնալիստիկայի	125	2.8%	125	2.7%	123	2.9%
15	Ռուս բանասիրության	61	1.3%	57	1.2%	57	1.3%
16	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ /ռոմանագերմանական բանասիրության/	533	11.8%	536	11.7%	522	12.1%
17	Արևելագիտության	152	3.4%	154	3.3%	148	3.4%
18	Իրավագիտության	282	6.2%	309	6.7%	282	6.6%
19	Աստվածաբանության	61	1.3%	63	1.4%	60	1.4%
20	ՏՏ կրթական և հետազոտական կենտրոն	19	0.4%	19	0.4%	19	0.4%
21	ԵՈՒ կենտրոն	34	0.8%	20	0.4%	8	0.2%
22	Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	5	0.1%	5	0.1%	5	0.1%
23	Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն	11	0.2%	11	0.2%	11	0.3%
24	Ֆարմացիայի ինստիտուտ	158	3.5%	158	3.4%	158	3.7%
25	Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	64	1.4%	64	1.4	64	1.5%
	Տվյալները չեն համապատասխանում	**0**	**0**	**74 ավել են**		**300 պակաս են**	**5%**
	Ընդամենը	**4525**	**100.0%**	4599	**100.0%**	4299	**100.0%**

Աղյուսակ 2

2019թ. շրջանավարտների բաշխումն ըստ ֆակուլտետների

	Ֆակուլտետ	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը	Քանակը	Տոկոսը
		Գլխավոր համախմբությունում		Ընդհանուր բազայում		Իրական ընտրանքում	
1	Մաթեմատիկայի և մեխանիկայի	135	3.0%	140	3.0%	42	2.6%
2	Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	229	5.0%	232	5.0%	93	5.8%
3	Ֆիզիկայի	73	1.6%	73	1.6%	29	1.8%
4	Ռադիոֆիզիկայի	96	2.1%	96	2.1%	26	1.6%
5	Քիմիայի	27	0.6%	27	0.6%	25	1.6%
6	Կենսաբանության	173	3.8%	173	3.7%	43	2.7%
7	Աշխարհագրության և երկրաբանության	371	8.1%	367	7.9%	92	5.8%
8	Պատմության	313	6.9%	317	6.9%	19	1.2%
9	Միջազգային հարաբերությունների	523	11.5%	524	11.3%	152	9.5%
10	Տնտեսագիտության և կառավարման	473	10.4%	481	10.4%	245	15.3%
11	Փիլիսոփայության և հոգեբանության	203	4.5%	208	4.5%	148	9.3%
12	Սոցիոլոգիայի	173	3.8%	177	3.8%	11	0.7%
13	Հայ բանասիրության	181	4.0%	181	3.9%	135	8.5%
14	Ժուռնալիստիկայի	148	3.2%	150	3.2%	47	2.9%
15	Ռուս բանասիրության	61	1.3%	57	1.2%	11	0.7%
16	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ /ռոմանագերմանական բանասիրության/	580	12.7%	580	12.6%	50	3.1%
17	Արևելագիտության	169	3.7%	169	3.7%	44	2.8%
18	Իրավագիտության	340	7.5%	372	8.1%	218	13.7%
19	Աստվածաբանության	54	1.2%	54	1.2%	1	0.1%
20	ՏՏ կրթական և հետազոտական կենտրոն	5	0.1%	8	0.2%	0	0
21	ԵՈՒ կենտրոն	28	0.6%	11	0.2%	10	0.6%
22	Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	6	0.1%	6	0.1%	0	
23	Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն	0	0.0%				
24	Ֆարմացիայի ինստիտուտ	146	3.2%	144	3.1%	85	5.3%
25	Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	71	1.6%	71	1.5%	71	4.4%
	Չհամապատասխանող տվյալներ ընդամենը	0	0	40 ավել են		2964 պակաս են	65,2%
	Ընդամենը	4578	100.0%	4618	100.0%	1597	100.0%

Եթե դասակարգենք ֆակուլտետներն ըստ շրջանավարտների մասնակցության հարցմանը, ապա 2018թ. տվյալների համար 9 ֆակուլտետ մասնակցել են ամբողջությամբ, 3 ֆակուլտետ դրսևորել են 85%-ից բարձր մասնակցություն, միայն ***ԵՈՒ կենտրոնն*** առանձնանում է բավականին ցածր մասնակցությամբ /23.5%/ /տե՛ս Աղյուսակ 3/։ Սակայն քանի որ ***ԵՈՒ կենտրոնը*** ներկայացնում է ամբողջ համախմբության ընդամենը 0,8%, ապա այդ հանգամանքը չի ազդում հետազոտության ընդհանուր ներկայացուցչության վրա։

Ինչ վերաբերում է 2019 թ., ապա ընդհանուր ցածր մասնակցության ֆոնի վրա առանձնանում են ***Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը*** և ***Քիմիայի*** ֆակուլտետը, որոնք դրսևորել են *բարձր մասնակցություն*։ Հակառակ բևեռում են ***ՏՏ կենտրոնը*** և ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը***, որոնց շրջանավարտներն ընդհանրապես չեն մասնակցել հետազոտությանը։ Նաև ցածր մասնակցություն են դրսևորել 2019թ. ***Եվրոպական լեզուների և հաղորդակցության***, ***Սոցիոլոգիայի***, ***Պատմության*** և ***Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտները /տե՛ս Աղյուսակ 3/։

Աղյուսակ 3

Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների տոկոսն ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների տոկոս 2018 թ.	Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների տոկոս 2019թ.
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	100.0%	100.0%
Քիմիայի	100.0%	92.6%
Հայ բանասիրության	87.9%	74.6%
Փիլիսոփայության և հոգեբանության	97.2%	72.9%
Իրավագիտության	100.0%	64.1%
Ֆարմացիայի ինստիտուտ	100.0%	58.2%
Տնտեսագիտության և կառավարման	100.2%	51.8%
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	97.9%	40.6%
Ֆիզիկայի	99.1%	39.7%
ԵՈՒ կենտրոն	23.5%	35.7%
Ժուռնալիստիկայի	98.4%	31.8%
Մաթեմատիկայի և մեխանիկայի	89.5%	31.1%
Միջազգային հարաբերությունների	90.2%	29.1%
Ռադիոֆիզիկայի	95.7%	27.1%
Արևելագիտության	97.4%	26.0%
Կենսաբանության	87.1%	24.9%
Աշխարհագրության և երկրաբանության	100.9%	24.8%
Ռուս բանասիրության	93.4%	18.0%
Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ /Ռոմանագերմանական բանասիրության/[5]	97.9%	8.6%
Սոցիոլոգիայի	98.1%	6.4%
Պատմության	85.9%	6.1%
Աստվածաբանության	98.4%	1.9%
ՏՏ կրթական և հետազոտական կենտրոն	100.0%	0.0%
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	100.0%	0.0%
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն	100.0%	-

[5] Այսուհետ ռոմանագերմանական ֆակուլտետը, որը 2019թ. անվանափոխվել է և դարձել Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անվանվելու է նոր անվանումով:

Պետք է նշել, որ գլխավոր համախմբության կառուցվածքն ըստ **սեռի** բացակայում է, ըստ այդմ հնարավոր չէ դատել ընտրանքի ներկայացուցչության մասին ըստ սեռի: Համեմատելով 2018 և 2019 թ.թ. շրջանավարտների բաշխումներն ըստ սեռի, կարող ենք եզրակացնել, որ երկու դեպքում էլ գերակշռում են իգական սեռի ներկայացուցիչները, սակայն 2019թ. բաշխվածության մեջ իգական սեռի ներկայացուցիչների տոկոսը ավելի բարձր է, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ

- **կամավորների կազմում ավելի են գերակշռում կանայք** /տե՛ս Գծապատկեր 1/:

Գծապատկեր 1

2018թ. և 2019թ. հարցված շրջանավարտների համեմատական բաշխումը ըստ սեռի



Ինչ վերաբերում է **կրթական աստիճանի** և **կրթական համակարգի**, ապա տեսնում ենք, որ 2018թ. տվյալները ներկայացնում են գլխավոր համախմբության կառուցվածքն ըստ այդ բնութագրիչների (տե՛ս Աղյուսակներ 4 և 5), իսկ 2019թ. տվյալների

տարբերություն կազմում է ***կրթական աստիճանի*** համար 7,6 % (ավելի շատ են պատասխանել մագիստրոսները), իսկ սխալը ըստ ***կրթական համակարգի*** համար կազմել է 4,5% (գերակշռում են հեռակա համակարգի շրջանավարտները)։ Չնայած, որ մինչև 5 % սխալը ընդունելի է, այնուամենայնիվ ընդհանուր առմամբ մենք կարող ենք եզրակացնել, որ 2019 թ. տվյալները շեղված են ի օգուտ մի քանի վերը նշված ֆակուլտետների, մագիստրոսների և հեռակա համակարգում սովորող շրջանավարտների։ Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ

- **կամավորների կազմում ավելի են գերակշռում մագիստրոսները։**

Աղյուսակ 4.

Շրջանավարտների բաշխումն ըստ կրթական աստիճանի

	2018 թ.		2019 թ.	
	Տոկոսը ընտրանքում	Տոկոսը գլխավոր համախմբությունում	Տոկոսը ընտրանքում	Տոկոսը գլխավոր համախմբությունում
Բակալավր	73.2%	72.6%	65.1%	71.7%
Մագիստրոս	26.8%	27.4%	34.9%	27.3%
Ընդամենը	100%	100%	100%	100%

Աղյուսակ 5.

Շրջանավարտների բաշխումն ըստ կրթական համակարգի

	2018 թ.		2019 թ.	
	Տոկոսը ընտրանքում	Տոկոսը գլխավոր համախմբությունում	Տոկոսը ընտրանքում	Տոկոսը գլխավոր համախմբությունում
Առկա	84.7%	85%	76.8%	81.3%
Հեռակա	15.3%	15%	23.2%	18.7%
Ընդամենը	100%	100%	100%	100%

- **Նշենք, որ 2019թ. հարցմանը մասնակցած կամավորների խումբը նաև առանձնանում է ավելի բարձր առաջադիմությամբ**, քան 2018թ. շրջանավարտները /տե՛ս Գծապատկեր 2/:

Գծապատկեր 2

Շրջանավարտների բաշխումն ըստ առաջադիմության, 2018 - 2019թ.թ.





Վերլուծելով շրջանավարտների **կրթությունը շարունակելու ձգտումը**, պետք է նշել, որ ընդհանուր առմամբ շրջանավարտները բնութագրվում են ապագայում կրթություն ստանալու ցանկությամբ. պատասխանած շրջանավարտների 54.5% (ըստ 2018թ. արդյունքների) և 58.3% (ըստ 2019թ. արդյունքների) պատրաստվում են շարունակել ուսումը: Բոլոր տարիներին հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ ուսումը շարունակելու ցանկացողների տոկոսը գոյանում է հիմնականում բակալավրիատի շրջանավարտների պատասխաններից. *բակալավրիատն* ավարտածների գերակշռող մեծամասնությունը (63% և 73.1% համապատասխանաբար 2018թ. և 2019թ.) ձգտում է շարունակել ուսումը: Մագիստրատուրան ավարտածների համար այդ թիվը կազմում է 34.7% և 34,1%

համապատասխանաբար 2018թ. և 2019թ. (տե՛ս Գծապատկեր 3): Պետք է նշել նաև, որ վերջին տարիներին (առնվազն վերջին 5 տարիների ընթացքում) ուսանողների ցանկությունը շարունակել ուսումը անընդհատ *նվազում էր՝* համեմատած նախորդ տարիների հետ: Այդ միտումը բավականին կայուն էր, սակայն 2019թ. ընտրանքի թերությունների պատճառով միտումը որոշ չափով շեղված է *բակալավրների* մոտ, քանի որ պատասխանել է հիմնականում կամավորների խումբը:

- **Կամավորներ բակալավր շրջանավարտների կազմում ավելի են ներկայացված ուսումը շարունակելու ցանկությամբ շրջանավարտները:**

Գծապատկեր 3.

2018թ. և 2019թ. շրջանավարտների ուսումը շարունակելու ցանկությունն ըստ կրթական աստիճանի



Տարբեր ֆակուլտետներում շրջանավարտների ցանկությունը *շարունակել ուսումը* տարբեր կերպ է դրսևորվում: Ըստ ֆակուլտետների ուսումը շարունակելու ցանկացող շրջանավարտների տոկոսների փոփոխությունները 2018թ.-ից 2019թ. բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4

Շրջանավարտների ուսումը շարունակելու ցանկացողների տոկոսները 2018 - 2019թ.թ. ըստ ֆակուլտետների



Նշենք, որ վերլուծության հիմք պետք է ընդունել 2018թ. տվյալները, ըստ որոնց ուսումը շարունակելու առավել բարձր ցանկություն են դրսևորել ***ԵՈՒ կենտրոնի***, ***Իրավագիտության*** և ***Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտները:

Ռուս բանասիրության, ***Աստվածաբանության***, ***Եվրոպական լեզուների և հաղորդակցության***, ***Ռադիոֆիզիկայի*** և ***Կենսաբանության*** ֆակուլտետների շրջանավարտների շրջանում ուսումը շարունակելու *անբնական աճ* է դրսևորվել:

Ինչ վերաբերում է աշխատաշուկայում ուսանողների ներգրավվածությանը, ապա աշխատող շրջանավարտների քանակը գրեթե չի փոխվել 2018-ից 2019թ.-ը: Սակայն կառուցվածքում մասնագիտությամբ աշխատող ուսանողների կշիռը՝ ի համեմատ ոչ մասնագիտությամբ աշխատողների *ավելացել* է մոտ 6%-ով (տե՛ս Գծապատկեր 5):

- Դա կարող է պայմանավորված լինի կամավորների կառուցվածքի շեղումներով /այսինքն՝ 2019թ. մասնակցել են ավելի շատ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտները/:

Գծապատկեր 5

2018թ.- 2019թ. շրջանավարտների բաշխումներն ըստ աշխատանքի առկայության





Ի դեպ, մասնագիտությամբ աշխատողների կշիռը 2019թ. ավելի բարձր է ինչպես բակալավրների, այնպես էլ մագիստրոսների շրջանում (տե՛ս Գծապատկեր 6):

Գծապատկեր 6.

Աշխատանքի առկայությունն ըստ կրթական աստիճանի 2018թ. - 2019թ.



Պետք է նշել, որ ֆակուլտետներն ըստ շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության՝ նշանակալի տարբերվում են մեկը մյուսից[6]: Ընդ որում, ***Ժուռնալիստիկայի ֆակուլտետը*** վերջին մի քանի տարվա ընթացքում գրավում էր առաջին տեղերը և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության տեսակետից, չնայած որ մի քանի տարիների ընթացքում դիտվում էր այդ ֆակուլտետի շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության նվազում: Ի վերջո, 2018թ.-ին այդ ֆակուլտետը զիջեց իր տեղը ***Ֆիզիկայի*** ֆակուլտետին (տե՛ս Գծապատկերներ 7): 2019 թ. համար տվյալները բավականին խնդրահարույց են, մասնավորապես, առանձնանում են ***Աստվածաբանության*** և ***Քիմիայի*** ֆակուլտետներն աշխատող շրջանավարտների բավականին կասկածելի *աճով*: Կարելի է ենթադրել, որ դրանք պայմանավորված են ընտրանքի խախտումներով:

[6] Նշանակալի կապերը վերհանվել են Կրամերի գործակցի օգնությամբ 0,05 նշանակալիության մակարդակի համար:

Գծապատկեր 7.

Բակալավրիատի շրջանավարտների մոտ աշխատաշուկայում ներգրավվածության փոփոխությունները 2018թ. – 2019թ. ըստ ֆակուլտետների



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 8-ից մագիստրատուրայի ընդգրկվածությունը աշխատանքային շուկա ըստ ֆակուլտետների տարբերվում է բակալավրիատից։ Նշենք ևս այն հանգամանքը, որ շուկայում ընդգրկվածության կտրուկ փոփոխություններն ըստ ֆակուլտետների պայմանավորված են ընտրանքի շեղումներով։

Գծապատկեր 8.

Մագիստրատուրայի շրջանավարտների մոտ աշխատանքի առկայության փոփոխությունները 2018թ. – 2019թ. ըստ ֆակուլտետների



Ինչպես երևում է Գծապատկերից, ***ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի***, ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի***, ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի*** շրջանավարտները առավել ներգրավված են աշխատաշուկայում: Հակառակը՝ ***Աստվածաբանության, Հայ*** և ***Ռուս բանասիրության*** ֆակուլտետների, ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի*** շրջանավարտների աշխատաշուկայում ընդգրկվածությունը բավականին ցածր է:

Հետաքրքրական է նաև, որ վերջին հետազոտությունների ընթացքում հեռակա համակարգի շրջանավարտների կեսից ավելին ընդգրկված էին աշխատաշուկայում, սակայն նրանց գերակշռող մասը չէր աշխատում մասնագիտությամբ: Նման պատկեր կրկնվում է նաև 2018 թ.-ն, սակայն 2019 թ. հեռակա համակարգում սովորող շրջանավարտների կեսից ավելին աշխատում է մասնագիտությամբ (տե՛ս Գծապատկեր 9):

- Դա նշանակում է, որ կամավորների ընտրանքը շեղված է դեպի մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների:

Գծապատկեր 9.

Աշխատանքի առկայությունն ըստ կրթական համակարգի 2018թ. - 2019թ.



Անդրադառնալով շրջանավարտների աշխատաշուկայում մասնագիտացվածությանն ըստ ֆակուլտետների, պետք է նշել, որ համաձայն 2018 թ. տվյալների առավել «մասնագիտացված» են աշխատում ***ՏՏ կենտրոնը*** և ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետի, ինչպես նաև ***Ֆարմացիայի ինստիտուտի*** շրջանավարտները. մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը զգալիորեն գերակշռում է այլ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվին: Ի դեպ, այդ օրինաչափությունը կայուն է եղել վերջին հետազոտությունների ժամանակ /տե՛ս Գծապատկեր 10/:

Պետք է նշել, որ 2019թ. շրջանավարտների մասնագիտացվածության ցուցանիշի աճը պայմանավորված է կամավոր հարցվողների համախմբության առանձնահատկություններով:

Գծապատկեր 10.
Մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների տոկոսը աշխատող շրջանավարտների թվի մեջ ըստ ֆակուլտետների 2018թ. և 2019թ.



Պետք է նշել, որ ի տարբերություն 2018թ. տվյալների, 2019թ. շրջանավարտների մոտ որոշ չափով աճել է ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը: Եթե 2018թ. ապագա աշխատանքի մասին *տեղեկություններ ունեցող* շրջանավարտների տոկոսը կազմում էր մոտ 43,5%, ապա 2019թ. այն աճել է և կազմել 47,5%:

Որպես օրինաչափություն կարելի է նշել, որ *բակալավրիատի* շրջանավարտներն ավելի քիչ են տեղեկացված աշխատաշուկայում իրենց հնարավորությունների մասին, քան մագիստրատուրայի շրջանավարտները, և այդ միտումը շարունակական է վերջին տարիներին անցկացրած հետազոտությունների համար: Այդ օրինաչափությունը երևում է Գծապատկեր 11-ում:

Գծապատկեր 11.

Ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացված շրջանավարտների տոկոսը ըստ կրթական աստիճանի 2018թ. և 2019թ.



Ինչ վերաբերում է ֆակուլտետներին, ապա տեղեկացված ուսանողների տոկոսային փոփոխությունների 2018թ. և 2019թ. տրված են Գծապատկեր 12-ում:

Գծապատկեր 12.

Ապագա աշխատանքի վերաբերյալ տեղեկացված շրջանավարտների տոկոսը ըստ ֆակուլտետների 2018թ. և 2019թ.



Ինչպես երևում է Գծապատկերից՝ առավել խնդրահարույց է իրավիճակը հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետներում, այն է՝ ***Արևելագիտության, Եվրոպական լեզուների***, ***Ռուս բանասիրության, Պատմության*** ֆակուլտետներում: Իսկ ***ԵՈՒ կենտրոնի***, ***Կենսաբանության*** և ***Քիմիայի*** ֆակուլտետների շրջանավարտների տեղեկացվածության բավականին մեծ աճը կարող է պայմանավորված լինի ընտրանքի առանձնահատկություններով:

§2. Հետազոտությանը մասնակցած շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից, ուսումնական գործընթացի կազմակերպումից

2.1. Շրջանավարտների գնահատականների ընդհանուր նկարագիրը

Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ ԵՊՀ շրջանավարտները բավարարված են ԵՊՀ-ում ստացված կրթությունից: Դրա մասին են վկայում շրջանավարտների կողմից տրված գնահատականները, որոնք ընդհանուր առմամբ գտնվում են «լավ» և «գերազանց» գնահատականների միջև [7]: Հետազոտությունում ուսումնասիրվել են կրթության մի շարք բնութագրեր, այդ թվում՝

- կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը և ուսուցման գործընթացի կազմակերպումը,
- ԵՊՀ ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները,
- ԵՊՀ կրթական միջավայրը:

[7] Նշենք, որ գնահատման սանդղակը եղել է ունիվերսալ բոլոր գնահատականների համար և ներկայացրել է իրենից 4 միավորանոց սանդղակ, որտեղ «2»-ը ներկայացրել է «անբավարար» գնահատականը, «3»-ը՝ «բավարար», «4»՝ «լավ», և «5»-ը՝ «գերազանց»: Ըստ այդմ համեմատական վերլուծությունն այս դեպքում արդարացված է:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ շրջանավարտներն ավելի շատ են բավարարված *ԵՊՀ միջավայրից*, որտեղ ընդգրկված են ինչպես ԵՊՀ, այնպես էլ ֆակուլտետների ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական կառույցները և այլն: Համեմատաբար քիչ են բավարարված շրջանավարտները *ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից*: Իսկ բավարարվածությունը *կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսուցման գործընթացի կազմակերպումից* զբաղեցնում է ընդհանուր առմամբ միջին դիրքը: Այդ միտումներն առկա էին վերջին տարիներին անցկացրած գրեթե բոլոր հետազոտությունների համար:

Միջինում առավել *բարձր* են գնահատել շրջանավարտները ***գիտական ղեկավարի աշխատանքը:*** Այս դեպքում հետաքրքրականն այն է, որ ավանդաբար ***պրոֆեսորադասախոսական կազմը*** կայուն զբաղեցրել էր *ամենաբարձր* տեղը սակայն, 2018թ.- 2019թ.-ից ավելի բարձր սկսել է գնահատվել ***ֆակուլտետի ղեկավարությունը***, իսկ ***պրոֆեսորադասախոսական կազմը*** զբաղեցրել է *երրորդ* հորիզոնականը /տե՛ս Գծապատկեր 2.1/: ***Տեսական գիտելիքներից*** գոհունակությունը ևս ավանդաբար բարձր է, ինչպես նաև ***ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության*** և ***գիտելիքների գնահատման օբյեկտիվության*** գոհունակությունը***:***

Նշենք նաև, որ 2018թ. շրջանավարտների կողմից տրված գնահատականներում օրինաչափություններն ընդհանուր առմամբ պահպանվել են 2019թ.գնահատականների համար: Առավել ցածր գոհունակություն են ցուցաբերում շրջանավարտները ***գործնական հմտություններից***, ***համացանցի մատչելիությունից*** և ***օտար լեզուների իմացությունից*** /տե՛ս Գծապատկեր 2.1/:

Գծապատկեր 2.1.

ԵՊՀ-ում ստացած կրթությանը վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ 2018թ. – 2019թ. շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականների



****

Այժմ անդրադառնանք **կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսուցման գործընթացի կազմակերպմանը** վերաբերող գնահատականների բուն վերլուծությանը:

Կարելի է արձանագրել, որ շրջանավարտների բավարարվածությունը այդ ոլորտում կառուցվածքային փոփոխություններ գրեթե չի կրել, բացառությամբ *գիտական ղեկավարի աշխատանքի* գնահատականից: Այն գնահատվում է շրջանավարտների կողմից *առավել բարձր*: Ընդ որում մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն հիմնականում ավելի բարձր են քան բակալավրիատի շրջանավարտների գնահատականները, բացառություն են կազմում *գիտելիքների գնահատականների օբյեկտիվությունը* և *պրակտիկաների օգտակարությունը*: Ավանդաբար բարձր են գնահատել շրջանավարտները *տեսական գիտելիքները,* ապա *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությանը* և *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը* /տե՛ս Աղյուսակ 2.1/:

Հարցվողները միջինում 4-ից բարձր են գնահատել նաև *հաճախած դասընթացների օգտակարությունը, մասնագիտական կարողությունների ձեռքբերումը*, ինչպես նաև *պրակտիկաների օգտակարությունը:* Այդ գնահատականներն ընդհանուր առմամբ *համասեռ* են դրսևորվել (տե՛ս Աղյուսակ 2.1):

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2.1-ից շրջանավարտների բավարարվածության աստիճանը նվազել է 2019թ.-ին, ինչը բավականին անսպասելի է, քանի որ նախորդ հետազոտությունների ընթացքում գնահատականների կայուն աճ էր գրանցվում:

Առավել խնդրահարույց են *օտար լեզուների իմացության* և *գործնական հմտությունների* գնահատականներ, ինչը ևս պահպանում է նախորդ հետազոտություններում արձանագրված միտումները:

Աղյուսակ 2.1.

Կրթական ծրագրերի բովանդակությանը, ուսուցման մեթոդաբանությանը և ուսուցման գործընթացի կազմակերպմանը վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների բավարարվածության միջին գնահատականների

	Միջին գնահատական 2018թ.	Միջին քառակուսային շեղում 2018թ.	**Միջին գնահատական 2019թ.**	Միջին քառակուսային շեղում 2019թ.
Բավարարվածությունը մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից	**4.73**	0.63	**4.68**	0.74
Բավարարվածությունը ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից	**4.60**	0.77	**4.64**	0.77
Տեսական գիտելիքների տրման գնահատական	**4.45**	0.72	**4.49**	0.71
Ամփոփիչ ատեստավորման գնահատական	**4.39**	0.85	**4.35**	0.88
Գիտելիքի գնահատման օբյեկտիվության գնահատական	**4.38**	0.75	**4.33**	0.79
Հաճախած դասընթացների օգտակարության գնահատական	**4.30**	0.76	**4.28**	0.79
Մասնագիտական կարողությունների ձեռքբերման գնահատական	**4.23**	0.80	**4.21**	0.81
Պրակտիկաների օգտակարության գնահատական	**4.23**	0.99	**4.19**	1.03
Օտար լեզուների իմացության գնահատական	**3.91**	1.04	**3.73**	1.06
Գործնական հմտությունների տրման գնահատական	**3.86**	1.03	**3.72**	1.06

Ընդ որում գնահատականները նշանակալի տարբերվում են տարբեր ***ֆակուլտետների*** համար և այդ գնահատականների համասեռությունը ավելի ցածր է:

2.2. Շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտական կարողություններից .

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.2.1)։ Ըստ կրթական աստիճանի, տարբերությունները **նշանակալի են** ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ.: Դա նշանակում է, որ բակալավրիատի շրջանավարտների գնահատականները էականորեն ավելի ցածր են, քան մագիստրատուրայի։ Ինչպես տեսնում ենք Գծապատկերից *մասնագիտական կարողություններից* բավարարվածությունը *նվազել* է *բակալավր* շրջանավարտների շրջանում, սակայն գրեթե չի փոխվել *մագիստրատուրայի* շրջանավարտների մոտ, չնայած, որ նախորդ տարիներին մագիստրոսների մոտ գնահատականների աճման միտում էր գրանցվել։

Գծապատկեր 2.2.1.

Մասնագիտական կարողությունների ձեռքբերման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.8.2):

Գծապատկերից կարող ենք եզրակացնել, որ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Ֆիզիկայի, Ռադիոֆիզիկայի, Կենսաբանության*** ֆակուլտետների և ***ԵՈՒ*** և ***ՏՏ կենտրոնների*** շրջանավարտների բավարարվածությունը մասնագիտական կարողությունների ձեռքբերումից համեմատաբար ցածր է:

Հետաքրքրական է նաև այն, որ 2018թ.-ին ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների 5,6%-ը, ինչպես նաև ***ՏՏ կենտրոնի*** շրջանավարտների 5,3%-ը, իսկ 2019թ.-ին ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների 8%-ը *չեն կողմնորոշվել* մասնագիտական կարողությունները գնահատելիս:

Նշենք նաև, որ ***Արևելագիտության***, ***Ժուռնալիստիկայի, Կենսաբանության*** և ***Ֆիզիկայի,*** նաև ***Պատմության*** և ***Քիմիայի*** ֆակուլտետների շրջանավարտների գնահատականների բավականին *աճ*է գրանցվել, իսկ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի***, ***Սոցիոլոգիայի*** և ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների գնահատականների նվազում:

Գծապատկեր 2.2.2.

Մասնագիտական կարողությունների ձեռքբերման միջին գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխությունն ըստ ֆակուլտետների



2.3. Շրջանավարտների բավարարվածությունը տեսական գիտելիքներից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ 2018թ. – 2019թ. գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.3.1): Ըստ կրթական աստիճանի, տարբերությունները 2018թ. և 2019 թ. **նշանակալի են** և ընդ որում *մագիստրատուրայի* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում տեսական գիտելիքները: Նշենք, որ 2019թ. գնահատականները այս դեպքում *աճել* են, համեմատած 2018թ. հետ:

Գծապատկեր 2.3.1.

Տեսական գիտելիքների տրման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների տեսական գիտելիքների միջին գնահատականների փոփոխությունները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.3.2):

Գծապատկեր 2.3.2.

Տեսական գիտելիքների տրամադրման գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխություններն ըստ ֆակուլտետների



Պետք է նշել, որ տեսական գիտելիքները ընդհանուր առմամբ բավականին բարձր են գնահատվում շրջանավարտների կողմից: Ըստ ֆակուլտետների փոփոխություններ բավականին անհամասեռ են, սակայն ելնելով ընտրանքների անհամարժեքությունից պատճառները դժվար է վերհանել: Գնահատականների աճ է արձանագրվել ***Արևելագիտության***, ***Աստվածաբանության***, ***Կենսաբանության*** և ***Քիմիայի*** ֆակուլտետներում, իսկ նվազում՝ ***Ռադիոֆիզիկայի*** և ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետներում: Նշենք նաև, որ 2018թ. ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտների 5.3%-ը և ***ՏՏ կենտրոնի*** 10.5%-ը դժվարացել են պատասխանել այս հարցին: Իսկ 2019թ.-ին ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների 12%-ն է դժվարացել պատասխանել այս հարցին:

2.4. Շրջանավարտների բավարարվածությունը գործնական հմտություններից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.4.1): Որպես առանձնահատկություն պետք է նշել, որ բնույթը գնահատականների փոխվել է: Ըստ կրթական աստիճանի տարբերությունները 2018թ. եղել են **ոչ նշանակալի,** սակայն 2019թ. դրանք դարձել են կրկին **նշանակալի**: Դա նշանակում է, որ 2018թ. բավարարվածության համեմատաբար ցածր աստիճանը բնորոշ էր հավասար կերպով և՛ բակալավրներին, և՛ մագիստրոսներին, իսկ 2019թ.-ին մագիստրոսները նշանակալի ավելի *բարձր* են գնահատել այդ բաղադրիչը: Պետք է նշենք, որ *գործնական հմտություններից* բավարարվածությունը և՛ 2018թ.-ին, և՛ 2019 թ.-ին *առավել ցածր է*՝ համեմատած կրթական գործընթացի այլ բաղադրիչների հետ: 2019թ. *գործնական հմտություններից* բավարարվածությունը բավականին *նվազել է* բակալավրիատի շրջանավարտների մոտ, իսկ մագիստրոսների մոտ *աննշան աճել* է:

Գծապատկեր 2.4.1.
Գործնական հմտությունների մատուցման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.4.2):

Գծապատկեր 2.4.2.

Գործնական հմտությունների մատուցման միջին գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխություններն ըստ ֆակուլտետների



Վերլուծելով Գծապատկերում զետեղված տվյալները, կարող ենք եզրակացնել, որ գնահատականների նվազման և աճման միտումները նմանատիպ են. ***Արևելագիտության***, ***Ժուռնալիստիկայի, Կենսաբանության*** և ***Ֆիզիկայի,*** նաև որոշ

Աստվածաբանության և ***Քիմիայի*** ֆակուլտետների շրջանավարտների *գործնական հմտությունների* գնահատականների *կտրուկ աճ* է գրանցվել։

Նշենք, որ ***գործնական հմտությունների մատուցման*** գնահատումը բավականին խնդրահարույց է եղել շրջանավարտների համար։ Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա։

Աղյուսակ 2.3.1

Գործնական հմտությունների մատուցման գնահատական դժվարացող տալ շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	6.1%	8.7%
Ֆիզիկայի	9.4	
Ռադիոֆիզիկայի		16%
Միջազգային հարաբերությունների	5.4%	
Տնտեսագիտության	6.2%	
Փիլիսոփ. և հոգեբանության	7.3%	8.2%
Արևելագիտության	8.9%	
Աստվածաբանության	13.6%	
ՏՏ կենտրոն	5.3%	
ԵՈՒ կենտրոն	12.5%	10%
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	8.3%	

2.5. Շրջանավարտների բավարարվածությունը օտար լեզուների իմացությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.5.1)։ Հիշեցնենք, որ *օտար լեզուների իմացությունը* ևս համեմատաբար ցածր են գնահատվել շրջանավարտների կողմից։ Այս դեպքում ևս արձանագրվում է նման օրինաչափություն, ինչ *գործնական գիտելիքներից* բավարարվածությունը։ 2018թ. տարբերությունները բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների միջև **չեն եղել նշանակալի**։ Իսկ 2019թ.-ին դրանք դարձել են **նշանակալի**, ընդ որում *մագիստրոսների* գնահատականները նշանակալիորեն ավելի *բարձր* են, քան բակալավրիատի շրջանավարտների։ Դա պայմանավորված է 2019թ. բակալավրների գնահատականների կտրուկ նվազմամբ։

Գծապատկեր 2.5.1.

Օտար լեզուների իմացության ապահովման գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.5.2):

Գծապատկեր 2.5.2.

Օտար լեզուների իմացության ապահովման միջին գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխություններն ըստ ֆակուլտետների



Վերլուծելով Գծապատկերում զետեղված տվյալները, կարող ենք եզրակացնել, որ գնահատականների նվազման և աճման միտումները գրեթե նմանատիպ են. ***Արևելագիտության***, ***Աստվածաբանության*** և ***Կենսաբանության*** ֆակուլտետների շրջանավարտների *գործնական հմտությունների* գնահատականների *կտրուկ աճ* է գրանցվել:

Նշենք նաև այն, որ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի շրջանավարտները գոհ են օտար լեզուների իրենց իմացությունից:

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա: Ինչպես տեսնում ենք, *օտար լեզուների իմացության* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը բավականին *ցածր* է:

Աղյուսակ 2.5.1

Օտար լեզուների իմացության ապահովման գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի		8.7%
Ֆիզիկայի	7.5%	
Ռադիոֆիզիկայի	6.8%	20%
Քիմիայի		8%
Կենսաբանության	10.2%	
Պատմության	9.6%	10.5%
Փիլիսոփ. և հոգեբանության	6.7%	8.9%
Սոցիոլոգիայի	5.8%	9.1%
Հայ բանասիրության	6.8%	9.8%
Աստվածաբանության	18.3%	
ՏՏ կենտրոն	5.3%	

2.6. Շրջանավարտների բավարարվածությունը հաճախած դասընթացների օգտակարությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս Գծապատկեր 2.6.1)։ Ըստ կրթական աստիճանի, տարբերությունները **նշանակալի են** և՛ 2018թ.-ին, և՛ 2019թ.-ին, այսինքն, մագիստրոսները երկու դեպքում էլ նշանակալի ավելի գոհ են, քան բակալավրները։ Ինչպես տեսնում ենք Գծապատկերից *դասընթացների օգտակարությունից* բավարարվածությունը *նվազել* է բակալավրիատի, և *աճել* է մագիստրատուրայի շրջանավարտների մոտ։

Գծապատկեր 2.6.1.

Հաճախած դասընթացների օգտակարության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.6.2):

Գծապատկեր 2.6.2.
Հաճախած դասընթացների օգտակարության գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխություններն ըստ ֆակուլտետների



Գծապատկերից երևում է, որ *հաճախած գործընթացների օգտակարությունից* գոհունակությունը աճել է ***Արևելագիտության***, ***Աստվածաբանության***, ***Կենսաբանության*** ֆակուլտետներում և նվազել է ***Ռադիոֆիզիկայի***, ***Սոցիոլոգիայի***, ***Հայ բանասիրության*** ֆակուլտետներում:

Այս գնահատականները դժվարություն են առաջացրել 2018 թ.-ին միայն ***ՏՏ կենտրոնի*** 5,9% շրջանավարտների համար, իսկ 2019թ.-ին միայն ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետի 8% շրջանավարտների համար:

2.7. Շրջանավարտների բավարարվածությունը պրակտիկաների օգտակարությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս Գծապատկեր 2.7.1): Այս դեպքում տարբերությունները ևս **նշանակալի են** 2018թ. և 2019թ.: Սակայն ի տարբերություն վերը ներկայացված օրինաչափությունների, և՛ 2018թ., և՛ 2019թ. մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն նշանակալիորեն ավելի *ցածր* են: Այդպիսի օրինաչափությունը առկա էր նաև նախորդ տարիների հետազոտությունների արդյունքներում: Այս դեպքում էլ արձանագրվել է բակալավր շրջանավարտների *պրակտիկաների օգտակարությունից* բավարարվածության *աճ*, իսկ մագիստրոս շրջանավարտների գնահատականների *նվազում*, այսինքն՝ տարբերությունը բակալավրների և մագիստրոսների միջև դարձել է ավելի քիչ արտահայտված: Բացի այդ այս բաղադրիչի դեպքում չկողմնորոշված հարցվողների թիվը նշանակալի է և՛ 2018թ.-ին, և՛ 2019թ.-ին (տե՛ս Գծապատկեր 2.7.1):

Գծապատկեր 2.7.1.

Պրակտիկաների օգտակարության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.7.2):

Գծապատկեր 2.7.2.

Պրակտիկաների օգտակարության գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխություններն ըստ ֆակուլտետների



Վերլուծելով Գծապատկերում զետեղված տվյալները, կարող ենք եզրակացնել, որ գնահատականների նվազման և աճման միտումները նմանատիպ են. ***Արևելագիտության***, ***Ժուռնալիստիկայի, Կենսաբանության*** և ***Ֆիզիկայի,*** նաև

Աստվածաբանության և ***Քիմիայի*** ֆակուլտետների շրջանավարտների *պրակտիաների օգտակարության* գնահատականների բավականին *աճ* է գրանցվել, իսկ ***ԵՈՒ կենտրոնում, Ռադիոֆիզիկայի***, ***Սոցիոլոգիայի***, ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Հայ բանասիրության*** ֆակուլտետներում՝ *նվազում*:

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա: Ինչպես տեսնում ենք, *պրակտիկաների օգտակարության* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը բավականին *ցածր* է և՛ 2018թ.-ին, և՛ 2019թ.-ին:

Աղյուսակ 2.7.1

Պրակտիկաների օգտակարության գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	5.5%	9.8%
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	25.6%	35.9%
Ֆիզիկայի	9.3%	
Ռադիոֆիզիկայի	9.8%	7.7%
Դեղագիտության և քիմիայի	9.5%	
Միջազգային հարաբերությունների	10.1%	9.6%
Տնտեսագիտության և կառավարման	7.2%	8.6%
Փիլիսոփայության և հոգեբանության	9.3%	9.7%
Սոցիոլոգիայի		27.3%
Հայ բանասիրություն		6.0%
Ժուռնալիստիկայի	9.8%	6.7%
Ռուս բանասիրություն		9.1%
Եվրոպական լեզուներ		8.3%
Արևելագիտության	25.2%	14.0%
Իրավագիտության		7.4%
Աստվածաբանության	8.5%	
ԵՈՒ կենտրոն		20.0%
SS կենտրոն	31.6%	

2.8. Շրջանավարտների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.8.1)։ Ըստ կրթական աստիճանի, տարբերությունները **նշանակալի են** 2018 և 2019 թ.թ. համար։ Ինչպես տեսնում ենք Գծապատկերից *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից* բավարարվածությունը կտրուկ աճել է բակալավրիատի, և կտրուկ նվազել է մագիստրատուրայի շրջանավարտների մոտ։ Արդյունքում ստացվել է բավականին անսպասելի իրավիճակ, եթե 2018թ.-ին մագիստրոս շրջանավարտները նշանակալիորեն ավելի բարձր են գնահատել *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը*, ապա 2019թ.-ին *բակալավրներն* են նշանակալիորեն *ավելի* բավարարված *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից*։ Ի դեպ այս բաղադրիչը չի առաջացրել դժվարություններ գնահատման ժամանակ /այսինքն՝ պատասխանել դժվարացողների թիվը վիճակագրորեն արդարացված է/։

Գծապատկեր 2.8.1

Գիտելիքների գնահատման օբյեկտիվության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.8.2):

Գծապատկեր 2.8.2.

Գիտելիքների գնահատման օբյեկտիվության գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխություններն ըստ ֆակուլտետների



Վերլուծելով Գծապատկերում զետեղված տվյալները, կարող ենք եզրակացնել, որ ըստ *գիտելիքների գնահատման օբյեկտիվության* առավել խնդրահարույց է իրավիճակը ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի, ՏՏ կենտրոնի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** և ***Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների շրջանում: ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի***, ինչպես նաև ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները բավականին գոհ են *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից:*

2018թ.-ն միայն ***ՏՏ կենտրոնի*** շրջանավարտների 5.6%-ը չի կողմնորոշվել այդ հարցում:

2.9. Շրջանավարտների բավարարվածությունը ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.9.1): Ըստ կրթական աստիճանի, տարբերությունները 2018թ. և 2019թ. **նշանակալի են:** Ընդ որում, մագիստրոսները նշանակալի ավելի բավարարված էին իրենց ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից, քան՝ բակալավրները, չնայած, որ 2019թ. բավարարվածության մակարդակը որոշ չափով նվազել է:

Գծապատկեր 2.9.1.

Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ միջին գնահատականների փոփոխությունները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.9.2):

Գծապատկեր 2.9.2.

Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվության գնահատականների 2018թ. - 2019թ. փոփոխություններն ըստ ֆակուլտետների



Գծապատկերի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ գիտելիքների օբյեկտիվության գնահատականները կապված են *ամփոփիչ ատեստավորման*

օբյեկտիվության գնահատականների հետ: Սակայն ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները համեմատաբար դժգոհ են հենց *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից:* Իսկ հակառակը՝ ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները՝ ի տարբերություն *գիտելիքների գնահատման օբյեկտիվությանը,* ավելի գոհ են *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից:* Հետաքրքրական է, որ այն ֆակուլտետների շրջանավարտները, որոնք գնահատականների աճ են դրսևորում ավելացել են նաև ***Ռուս բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները:

Նշենք նաև, որ 2018թ. ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտների 7.1%-ը, ***ֆիզիկայի*** ֆակուլտետի 5,6%-ը, ***Արևելագիտության*** ֆակուլտետի 6,1%-ը դժվարացել են պատասխանել այս հարցին: Իսկ 2019թ.-ին ***Հայ բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտների 5,9%-ը և ***Եվրոպական լեզուների*** ֆակուլտետի 6,1%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

2.10. Շրջանավարտների բավարարվածությունը ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.10.1): Այդ գնահատականները ամենաբարձր գնահատականներն են, համեմատած այլ գնահատականների հետ: Պետք է նշել, որ այս գնահատականների համար տարբերությունները2019թ.-ին դարձել են **ոչ նշանակալի** և ըստ էության չեն տարբերվում մագիստրոս և բակալավր շրջանավարտների համար, ի տարբերություն 2018թ. **նշանակալի** տարբերությունների, երբ մագիստրոսները նշանակալիորեն ավելի բավարարված էին, քանի բակալավրները: Բակալավրների գնահատականները 2019թ.-ին կտրուկ աճել են:

Գծապատկեր 2.10.1.

Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի 2018թ. և 2019թ.



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.10.2):

Գծապատկեր 2.10.2.

Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի գնահատականներն ըստ ֆակուլտետների



2.11. Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից

Ըստ շրջանավարտների կրթական աստիճանի՝ ղեկավարների աշխատաժամերի գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկեր 2.11.1): Պետք է նշել, որ 2018թ.-ին մագիստրատուրայի շրջանավարտներն ընդհանուր առմամբ համարում են ավելի աշխատատար նրանց ղեկավարների աշխատանքը, սակայն 2019թ.-ի դրությամբ բակալավրների գնահատականները աճել են, իսկ մագիստրոսներինը՝ նվազել: Պետք է նշել նաև, որ 2018թ. այս հարցում պատասխան չտված շրջանավարտների տոկոսը 5,9% է, իսկ 2019թ. այն դարձել է 2,2%:

Գծապատկեր 2.11.1.

Ավարտական աշխատանքի / մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը շրջանավարտների կողմից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների՝ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ (տե՛ս գծապատկերներ 2.11.2ա և 2.11.2բ համապատասխան բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների համար):

Գծապատկեր 2.11.2ա.

Ավարտական աշխատանքի /բակալավրիատ/ և մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը 2018 թ. շրջանավարտների կողմից ըստ ֆակուլտետի



Գծապատկեր 2.11.2բ.

Ավարտական աշխատանքի /բակալավրիատ/ և մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի ժամանակի գնահատումը 2019 թ. շրջանավարտների կողմից ըստ ֆակուլտետի

§3. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից

Ինչպես վերը նշվել էր, շրջանավարտների միջին բավարարվածությունը *ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից* ընդհանուր առմամբ ավելի ցածր է, քան ուսումնառությանը վերաբերող միջին բավարարվածությունը (համեմատությունը կարելի է անել, քանի որ չափման համակարգերը նույնական են):

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 3.1-ից առավել բարձր են գնահատել շրջանավարտները *լսարանային աշխատանքային պայմանները*: Այդ միտումը պահպանվում է վերջին տարիներին արված հետազոտություններում ևս: Շրջանավարտները համեմատաբար բարձր են գնահատում *գրադարանի* աշխատանքի հետ կապված տարբեր բնութագրերը (տե՛ս Աղյուսակ 3.1):

Համացանցի մատչելիությունից, համակարգչային սրահների մատչելիությունից, լաբորատորիաների կահավորումից և ***Կարիերայի կենտրոնի դերից*** բավարարվածության աստիճանը համեմատած այլ բնութագրիչների հետ *ցածր* է (տե՛ս Աղյուսակ 3.1):

Նշենք նաև, որ և՛ 2018թ., և՛ 2019թ. առավել անհամասեռ /ոչ միանշանակ/ գնահատականները տրվել են վերո նշված բաղադրիչներին, ինչի մասին վկայում են Աղյուսակ 3.1-ում ներկայացված տվյալները /միջին քառակուսային շեղման արժեքները/:

Աղյուսակ 3.1.

Ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների բավարարվածության միջին գնահատականների

	2018թ.		2019թ.	
	Միջին գնահատական	Միջին քառակուսային շեղում	**Միջին գնահատական**	Միջին քառակուսային շեղում
Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից	**4.09**	0.92	**4.14**	0.88
Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից	**4.09**	0.96	**4.06**	0.98
Բավարարվածությունը գրադարանի կահավորումից	**4.06**	0.94	**4.08**	0.94
Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց	**4.0**	0.997	**3.96**	0.99
Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից	**3.95**	1.04	**3.95**	1.04
Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից	**3.95**	1.07	**4.00**	1.02
Բավարարվածությունը համակարգչային սրահների մատչելիությունից	**3.94**	1.01	**3.94**	1.02
Բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից	**3.90**	1.02	**3.86**	1.02

Հետազոտության տվյալները վկայում են այն մասին, որ այս ոլորտում բավականին շատ է այն շրջանավարտների թիվը, ովքեր չեն կողմնորոշվել գնահատականների մեջ:

Պետք է նշել, որ գրեթե բոլոր իրականացված հետազոտությունների արդյունքում պահպանվում է այն օրինաչափությունը, որ առավել դժվարություններ է առաջացնում *Կարիերայի կենտրոնի դերի, Համացանցի մատչելիության* գնահատումը (տե՛ս Աղյուսակ 3.2):

Աղյուսակ 3.2.

Պատասխաններ չտված և պատասխանել դժվարացած շրջանավարտների տոկոսն ըստ ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների

	Պատասխաններ չտվողների և դժվարացողների գումարային տոկոս 2018թ.	Պատասխաններ չտվողների և դժվարացողների գումարային տոկոս 2019թ.
Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից	16.1%	18.9%
Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց	8.7%	10.4%
Բավարարվածությունը գրադարանի սպասարկումից	7.6%	8.5%
Բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից	7.5%	6.9%
Բավարարվածությունը համակարգչային սրահների մատչելիությունից	7.5%	7.4%
Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից	<5%	<5%

Ի դեպ՝ *Կարիերայի կենտրոնի դերի* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածության մակարդակը առավել ցածր է, նաև այդ ծառայություններից և ռեսուրսներից բավարարվածության աստիճանը ևս ամենացածրն է՝ համեմատած մնացած միջին գնահատականների հետ: Հետաքրքրական է, որ գրադարանի ծառայությունների գնահատականներում չկողմնորոշվածները վերջին տարիներին աճել են:

3.1. Բավարարվածությունը լսարանային պայմաններից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.1.1), տարբերությունները 2018թ. **նշանակալի չէին**, սակայն 2019թ. տարբերությունները դարձել են **նշանակալի**: Ընդ որում, բակալավրների գնահատականները *նվազել* են, իսկ մագիստրոսներինը՝

բարձրացել են, և նրանց գնահատականները դարձել են նշանակալիորեն ավելի բարձր, քան բակալավրիատում:

Գծապատկեր 3.1.1.

Շրջանավարտների բավարարվածությունը լսարանային պայմաններից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների լսարանային պայմաններից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ. ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.2.2-ում:

Գծապատկեր 3.2.2.

Շրջանավարտների լսարանային պայմաններից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Ինչպես տեսնում ենք Գծապատկերից, որ *լսարանային պայմանների* առավել մեծ գուհունակություն են ցուցաբերել ***ԵՈՒ կենտրոնի***, ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի*** և ***Ռուս բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները: Մինչ դեռ այդ հարցը համեմատաբար դժգոհություն է առաջացրել ***Ֆիզիկայի*** և ***Ինֆորմատիկայի և Կիրառական մաթեմատիկայի***, ինչպես նաև ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի*** շրջանավարտների մոտ: Նշենք, որ ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների մոտ այդ լսարանական պայմանները ավանդաբար համեմատաբար ցածր են գնահատվում:

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա:

Աղյուսակ 3.2.1.

Շրջանավարտների լսարանային պայմաններին գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	6,1%	5,4%
Ֆիզիկայի	9,3%	6.9%
Ռադիոֆիզիկայի		15.4%
Քիմիայի	7,1%	
Պատմության	5.9%	
Սոցիոլոգիայի		18.2%
ՏՏ կենտրոն	5.3%	

3.2. Բավարարվածությունը համակարգչային սրահներից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս Գծապատկեր 3.2.1), տարբերությունները ***նշանակալի չէին*** 2018թ., սակայն դարձել են նշանակալի 2019թ.-ին ի հաշիվ բակալավրների գնահատականների նվազման և մագիստրոսների գնահատականների որոշակի աճի: Ընդ որում գնահատականների կառուցվածքը փոխվել է և եթե 2018թ. մագիստրոսները ավելի *ցածր* էին գնահատել բավարարվածությունը համակարգչային սրահներից,

ապա 2019թ. այն *աճել է* մագիստրատուրայի շրջանավարտների մոտ, և 2019թ. մագիստրոս շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր են* գնահատում *համակարգչային սրահները*, քան բակալավրները:

Գծապատկեր 3.2.1.

Շրջանավարտների բավարարվածությունը համակարգչային սրահներից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների *համակարգչային սրահներից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.3.2-ում:

Գծապատկեր 3.3.2.

Շրջանավարտների համակարգչային սրահներից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Ինչպես տեսնում ենք Գծապատկերում զետեղված տվյալներից, *համակարգչային սրահներից* առավել բարձր գոհունակություն են ցուցաբերում ***Իրավագիտության***, ***Աստվածաբանության***, ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետի և ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտները: Իսկ համեմատաբար դժգոհ են ավանդաբար ***Ֆիզիկայի*** և ***Ինֆորմատիկայի և Կիրառական մաթեմատիկայի***, ինչպես նաև ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի*** շրջանավարտները:

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա:

Ընդհանուր առմամբ, *համակարգչային սրահների* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը շատ *ցածր* է:

Աղյուսակ 3.3.1.

Շրջանավարտների համակարգչային սրահներին գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	13.0%	6,6%
Ֆիզիկայի	6,9%	13.9%
Ռադիոֆիզիկայի	11,5%	
Քիմիայի		11.9%
Կենսաբանության		11.2%
Պատմության	15,8%	11.2%
Հայ բանասիրության	13.5%	
Ժուռնալիստիկայի		7.0%
Ռուս բանասիրության		7.4%
Եվրոպական լեզուների	6,1%	7.1%
Արևելագիտության		10.3%
Աստվածաբանության		22.0%
SS կենտրոն		10.5%
ԵՈՒ կենտրոն	10%	

3.3. Բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.3.1), տարբերությունները ***նշանակալի չեն*** ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ.: Այստեղ տեսնում ենք նման պատկեր, ինչ որ արձանագրվել է նախորդ դեպքում. բակալավրների գնահատականները նվազել են,

իսկ մագիստրոսներինը՝ աճել են, սակայն գնահատականների տարբերությունները երկու դեպքում էլ նշանակալի չեն:

Գծապատկեր 3.4.1.

Շրջանավարտների բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների *Համացանցի մատչելիությունից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.4.2-ում:

Գծապատկեր 3.4.2.

Շրջանավարտների Համացանցի մատչելիությունից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Գծապատկերից երևում է, որ ***Հայագիտության հետազոտությունների***, ***Մասս մեդիայի զիտակրթական, ԵՈՒ կենտրոնների***, նաև ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները բավարարվածության *բարձր* աստիճան են դրսևորում համացանցի մատչելիությունից: Իսկ համեմատաբար դժգոհ են ավանդաբար ***Ֆիզիկայի*** և ***Ինֆորմատիկայի և Կիրառական մաթեմատիկայի*** շրջանավարտները:

Աղյուսակ 3.4.1.

Շրջանավարտների Համացանցի մատչելիության գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	6,1%	9,7%
Ֆիզիկայի	9.3%	
Ռադիոֆիզիկայի		7.7%
Քիմիայի	7.1%	
Պատմության		10.5%
Միջազգային հարաբերությունների		5.4%
Տնտեսագիտության		5.4%
Փիլիսոփ. և հոգեբանության		11.1%
Հայ բանասիրության		7.4%
Իրավագիտության		6%
ՏՏ կենտրոն	5.3%	
ԵՈՒ կենտրոն		10%

Վերը ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա:

3.4. Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.4.1), տարբերությունները 2018թ. ***նշանակալի չէին,*** այսինքն բակալավրների և մագիստրոսների գոհունակությունը նշանակալիորեն չէր տարբերվում: Սակայն *բակալավրիատի* շրջանավարտների գնահատականների *նվազումը* և *մագիստրատուրայի* շրջանավարտների

գնահատականների *աճը* դարձրեց 2019թ. տարբերությունները **նշանակալի**: Այսինքն՝ *բակալավրիատի* շրջանավարտների գնահատականները *նշանակալիորեն ավելի ցածր են*, քան *մագիստրատուրայի* շրջանավարտների գնահատականները:

Գծապատկեր 3.4.1.

Շրջանավարտների բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների Կարիերայի կենտրոնի դերից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.4.2-ում:

Գծապատկեր 3.4.2.

Շրջանավարտների Կարիերայի կենտրոնի դերից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Նշենք, որ Կարիերայի կենտրոնի գործունեության վերաբերյալ շրջանավարտների տեղեկացվածությունը ցածր է, չկողմնորոշված շրջանավարտների տոկոսը բավականին բարձր է։

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա։

Ընդհանուր առմամբ, *Կարիերայի կենտրոնի դերի* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը *վերին աստիճանի ցածր* է։

Աղյուսակ 3.4.1.
Շրջանավարտների Կարիերայի կենտրոնի դերի գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	18.2%	19.5%
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	14.0%	31.2%
Ֆիզիկայի	21.5%	13.8%
Ռադիոֆիզիկայի	17.3%	32.0%
Քիմիայի	4.9%	8.0%
Կենսաբանության	16.7%	9.8%
Աշխարհագրության և երկրաբանության	6.5%	14.4%
Պատմության	13.6%	21.1%
Միջազգային հարաբերությունների	16.0%	16.6%
Տնտեսագիտության և կառավարման	10.0%	14.9%
Փիլիսոփայության և հոգեբանության	11.7%	20.8%
Սոցիոլոգիայի	10.4%	18.2%
Հայ բանասիրության	13.9%	17.9%
Ժուռնալիստիկայի	19.3%	20.5%
Ռուս բանասիրության	10.9%	10.0%
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	13.6%	14.3%
Արևելագիտության	19.3%	20.5%

Իրավագիտության	14.7%	21.2%
Աստվածաբանության	41.8%	
ՏՏ կենտրոն	10.5%	10.0%
ԵՈՒ կենտրոն	12.5%	
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	40.0%	
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն		
Ֆարմացիայի ինստիտուտ	6.5%	5.9%
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	8.1%	2,9%

3.5. Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.5.1), տարբերությունները 2018թ. ***նշանակալի չէին,*** մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի բարձր էին, սակայն ոչ նշանակալի տարբերությամբ: 2019թ.-ին *բակալավրիատի* շրջանավարտների գնահատականները մնացին գրեթե անփոփոխ, իսկ *մագիստրատուրայի* շրջանավարտների գնահատականների *աճը* դարձրեց տարբերությունները **նշանակալի**: Այսինքն՝ *բակալավրիատի* շրջանավարտների գնահատականները *նշանակալիորեն ավելի ցածր են*, քան *մագիստրատուրայի* շրջանավարտների գնահատականները:

Գծապատկեր 3.5.1.

Շրջանավարտների բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.5.2-ում:

Գծապատկեր 3.5.2.

Շրջանավարտների լաբորատորիաների կահավորանքից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ *լաբորատորիաների կահավորանքի* վերաբերյալ կարծիքը պետք է հայտնեին *միայն Ֆիզ.-մաթ. և բնագիտական* ուղղվածության ֆակուլտետների շրջանավարտները, պետք է ամրագրենք, որ *ֆիլտրը չի աշխատել* այն տեսքով, ինչպես որ կիրառվել էր հարցաթերթում և ընդհանուր առմամբ շրջանավարտների կողմնորոշվածությունը *բավականին ցածր* է։

Աղյուսակ 3.5.1.

Շրջանավարտների լաբորատորիաների կահավորանքի գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	16,3%	34,5%
Ֆիզիկայի	12.0%	
Ռադիոֆիզիկայի		15.4%
Կենսաբանության	10.1%	
Աշխարհ. և երկրաբանության	11.7%	16.2%

3.6. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ գրադարանից

Ստորև ներկայացված է շրջանավարտների գրադարանի տաբեր կողմերից բավարարվածության վերլուծությունը։

3.6.1. Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.6.1)։ Ե՛վ 2018թ., և՛ 2019թ. բակալավրների և մագիստրոսների գնահատականների տարբերությունները ***նշանակալի չեն,*** այսինքն մագիստրատուրայի և բակալավրիատի շրջանավարտների գնահատականներն ընդհանուր առմամբ վիճակագրորեն չեն տարբերվում մեկը մյուսից։

Գծապատկեր 3.6.1.

Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.6.2-ում:

Գծապատկեր 3.6.2.

Շրջանավարտների գրադարանի գրականության ժամանակակից լինելուց բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Նշենք, որ այս դեպքում, ինչպես նաև նախորդ հետազոտություններում, առանձնանում են ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները նրանց *գրադարանի գրականության ժամանակակից լինելուց* առավել բարձր բավարարվածության մակարդակով: Իսկ ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի,*** ինչպես նաև ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետի շրջանավարտները՝ առավել անբավարար մակարդակ դրսևորելով: Պետք է նշել ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների բավարարվածության նվազումը:

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա:

Ընդհանուր առմամբ, *գրադարանի գրականության ժամանակակից լինելու* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը *բավականին ցածր* է:

Աղյուսակ 3.4.1.

Շրջանավարտների գրադարանի գրականության ժամանակակից լինելու գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	3.3%	2.5%
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	**10.6%**	**16.5%**
Ֆիզիկայի	**4.7%**	**6.9%**
Ռադիոֆիզիկայի	3.0%	3.8%
Քիմիայի	2.4%	8.0%
Կենսաբանության	**11.1%**	**4.8%**
Աշխարհագրության և երկրաբանության	2.1%	5.5%
Պատմության	7.2%	
Միջազգային հարաբերությունների	**7.5%**	**8.9%**
Տնտեսագիտության և կառավարման	**5.7%**	**10.4%**
Փիլիսոփայության և հոգեբանության	**8.0%**	**13.1%**
Սոցիոլոգիայի	**7.1%**	**18.2%**
Հայ բանասիրության	**3.8%**	**6.0%**

Ժուռնալիստիկայի	8.3%	6.8%
Ռուս բանասիրության	8.8%	
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	5.0%	10.2%
Արևելագիտության	10.2%	7.0%
Իրավագիտության	6.5%	8.4%
Աստվածաբանության	22.0%	
ՏՏ կենտրոն	10.5%	
ԵՈՒ կենտրոն		10.0%
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ		
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն	36.4%	
Ֆարմացիայի ինստիտուտ	3.9%	5.9%
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	6.3%	5.8%

3.6.2. Բավարարվածությունը գրադարանի կահավորանքից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.7.1), տարբերությունները 2018թ., ինչպես նաև 2019թ. ***նշանակալի չեն***: Հետաքրքրական է, որ 2018թ.-ին մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականները ավելի *ցածր* են, քան բակալավրիատինը, իսկ 2019թ-ին ստեղծվեց հակառակ պատկերը. մագիստրատուրայի շրջանավարտների գնահատականներն ավելի *բարձր* էին: Սակայն երկու դեպքում էլ տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն:

Գծապատկեր 3.7.1.

Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանի կահավորանքից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների *գրադարանի կահավորանքից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.7.2-ում:

Գծապատկեր 3.7.2.

Շրջանավարտների գրադարանի կահավորանքից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա։

Ընդհանուր առմամբ, *գրադարանի կահավորանքի* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը *վերին աստիճանի ցածր* է։

Աղյուսակ 3.4.1.

Շրջանավարտների գրադարանի կահավորանքին գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	3.3%	
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	**6.1%**	**6.5%**
Ֆիզիկայի	**4.6%**	**11.1%**
Ռադիոֆիզիկայի	1.5%	3.8%
Քիմիայի		4.0%
Կենսաբանության	**9.2%**	**2.4%**
Աշխարհագրության և երկրաբանության	0.6%	2.2%
Պատմության	4.4%	
Միջազգային հարաբերությունների	3.4%	3.4%
Տնտեսագիտության և կառավարման	**3.3%**	**7.5%**
Փիլիսոփայության և հոգեբանության	**6.1%**	**6.9%**
Սոցիոլոգիայի	**2.6%**	**10.0%**
Հայ բանասիրության	4.6%	4.5%
Ժուռնալիստիկայի	**6.6%**	**2.3%**
Ռուս բանասիրության	**7.1%**	
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	3.3%	4.1%
Արևելագիտության	**7.6%**	**4.7%**
Իրավագիտության	**3.2%**	**7.0%**
Աստվածաբանության	**19.0%**	
ՏՏ կենտրոն	5.3%	

ԵՈՒ կենտրոն		**10.0%**
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ		
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն	**45.5%**	
Ֆարմացիայի ինստիտուտ	3.3%	4.9%
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	**6.3%**	**3.1%**

3.6.3. Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 3.8.1), տարբերությունները ***նշանակալի չեն*** ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ.: Ինչպես երևում է գծապատկերից, բավարարվածությունը որոշ չափով *նվազել է բակալավրիատի* շրջանավարտների մոտ, իսկ *մագիստրատուրայի* շրջանավարտների մոտ որոշ չափով *աճել* է: Սակայն տարբերությունները մնացել են ոչ նշանակալի:

Գծապատկեր 3.8.1.

Շրջանավարտների բավարարվածությունը գրադարանում սպասարկումից ըստ կրթական աստիճանի



Շրջանավարտների *գրադարանում սպասարկումից* բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.ըստ ֆակուլտետների ներկայացված է Գծապատկեր 3.8.2-ում:

Գծապատկեր 3.8.2.

Շրջանավարտների գրադարանում սպասարկումից բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների



Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա։

Ընդհանուր առմամբ, *գրադարանի կահավորանքի* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը *բավականին ցածր* է։

Աղյուսակ 3.8.1.

Շրջանավարտների գրադարանի սպասարկմանը գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	2.8%	2.4%
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	5.7%	8.7%
Ֆիզիկայի	6.5%	3.4%
Ռադիոֆիզիկայի	3.0%	11.5%
Քիմիայի	7.1%	12.0%
Կենսաբանության	6.2%	2.4%
Աշխարհագրության և երկրաբանության	2.4%	6.5%
Պատմության	6.2%	
Միջազգային հարաբերությունների	7.1%	5.4%
Տնտեսագիտության և կառավարման	4.5%	8.7%
Փիլիսոփայության և հոգեբանության	6.7%	8.3%
Սոցիոլոգիայի	3.8%	10.0%
Հայ բանասիրության	7.0%	9.6%
Ժուռնալիստիկայի	4.1%	4.4%
Ռուս բանասիրության	10.7%	
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	4.1%	12.2%
Արևելագիտության	9.5%	6.8%
Իրավագիտության	6.1%	7.9%
Աստվածաբանության	20.3%	
ՏՏ կենտրոն	5.3%	
ԵՈՒ կենտրոն		
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	20.0%	10.0%

Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն	**45.5%**	
Ֆարմացիայի ինստիտուտ	3.8%	4.7%
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	4.8%	4.3%

Նշենք, որ գրադարանի աշխատանքներից առավել տեղյակ են ***Ժուռնալիստիկայի, Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետների, ինչպես նաև ***Ֆարմացիայի***, ***ԵՈՒ*** և ***Մանկավարժության և կրթության զարգացման*** կենտրոնների շրջանավարտները:

§4. Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ի միջավայրից

Ինչպես արդեն նշվել է, ԵՊՀ միջավայրից շրջանավարտների բավարարվածության աստիճանը, համեմատած մնացած գնահատականների հետ, միջինում ամենաբարձրն է, և այդ օրինաչափությունը պահպանվել է նաև 2019թ.:

Ամենաբարձր գնահատականները շրջանավարտները տվել են *ֆակուլտետների ղեկավարության աշխատանքին* /տե՛ս Աղյուսակ 4.1/: Այդ օրինաչափությունը առկա է և՛ 2018թ.-ին, և՛ 2019թ.-ին: Ի դեպ նախորդ տարիների հետազոտության արդյունքներով առավել բարձր գոհունակության էր արժանանում *պրոֆեսորադասախոսական կազմը*:

Հետաքրքրական է նաև, որ *ԵՊՀ ղեկավարությունից* գոհունակությունը բավականին *նվազել* է 2018թ.-ին, չնայած, որ որոշ չափով այն բարձրացել է 2019 թ.-ին սակայն համեմատելով նախորդ տարիների գնահատականների հետ այն բավականին նվազել է:

Պետք է նշել, որ ըստ գոհունակության գնահատման համեմատաբար ցածր տեղ զբաղեցնող *ուսանողական կառույցների գործունեությունը* շրջանավարտների կողմից ոչ միանշանակ է գնահատվել, ինչի մասին վկայում են միջին քառակուսային շեղման համեմատաբար բարձր արժեքները /մանրամասն տվյալները տե՛ս Աղյուսակ 4.1-ում/:

Աղյուսակ 4.1

ԵՊՀ-ի միջավայրին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների գոհունակության միջին գնահատականների

	Միջին գնահատականը	Միջին քառակուսային շեղումը	**Միջին գնահատականը**	Միջին քառակուսային շեղումը
	2018թ.		**2019թ.**	
Գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից	**4.52**	0.76	**4.53**	0.76
Գոհունակությունը պրոֆեսորա-դասախոսական կազմից	**4.51**	0.69	**4.52**	0.69
Գոհունակությունը ուսանողներին արձագանքելու ընթացակարգից	**4.15**	0.93	**4.11**	0.95
Գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից	**4.13**	0.94	**4.21**	0.88
Գոհունակությունը ուսանողական կառույցներից	**4.07**	1.01	**4.03**	1.04

Դա պայմանավորված է նրանով, որ շրջանավարտների տեղեկացվածությունն այդ կառույցների գործունեության վերաբերյալ համեմատաբար ցածր է եղել, ինչի մասին վկայում է չկողմնորոշված կամ չպատասխանած շրջանավարտների բարձր տոկոսը:

4.1. Գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.1.1)։ Եթե ներկայացված գնահատականների տարբերությունները 2018թ. **նշանակալի չէին** և գնահատականները գրեթե համընկնում էին, ապա 2019թ. տարբերությունները դարձան **նշանակալի** *մագիստրոսների* գնահատականների *աճի* պատճառով։

Գծապատկեր 4.1.1.

Շրջանավարտների գոհունակությունը ԵՊՀ ղեկավարությունից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների բավարարվածության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ. տե՛ս Գծապատկեր 4.1.2։

Գծապատկեր 4.1.2.

Շրջանավարտների ԵՊՀ ղեկավարությունից գոհունակության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ. ըստ ֆակուլտետների



Վերը ներկայացված Գծապատկերում ևս դրսևորվում են ընդհանուր միտումները ըստ ֆակուլտետների. *ԵՊՀ ղեկավարությունից գոհունակության* բարձր աստիճանով առանձնանում են ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի***; ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի, Ռուս բանասիրության, Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտները; իսկ ***ՏՏ*** և ***ԵՈՒ կենտրոնների, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետների շրջանավարտները առանձնացել են համեմատաբար *ցածր* գոհունակությամբ:

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա:

Աղյուսակ 4.1.1.

ԵՊՀ ղեկավարությանը գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	**6.6%**	**12.2%**
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	**11.3%**	**11.8%**
Ֆիզիկայի	**12.0%**	**3.4%**
Ռադիոֆիզիկայի	**6.0%**	**16.0%**
Քիմիայի	2.4%	
Կենսաբանության	5.2%	2.4%
Աշխարհագրության և երկրաբանության	1.5%	**5.6%**
Պատմության	3.2%	
Միջազգային հարաբերությունների	3.3%	2.7%
Տնտեսագիտության և կառավարման	3.2%	1.6%
Փիլիսոփայության և հոգեբանության	3.6%	**5.6%**
Սոցիոլոգիայի	5.1%	

Հայ բանասիրության	3.2%	4.5%
Ժուռնալիստիկայի	2.5%	2.2%
Ռուս բանասիրության	3.5%	
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	2.7%	**6.1%**
Արևելագիտության	**6.8%**	**7.0%**
Իրավագիտության	1.8%	3.7%
Աստվածաբանության	**6.8%**	
SS կենտրոն	**15.8%**	
ԵՈՒ կենտրոն		
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ		
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն		
Ֆարմացիայի ինստիտուտ	2.6%	
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	4.7%	1.4%

Ինչպես տեսնում ենք, *ԵՊՀ ղեկավարության* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը բավականին *ցածր* է:

4.2. Գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.2.1): Եթե ներկայացված գնահատականների տարբերությունները 2018թ. **նշանակալի էին** և ընդ որում *մագիստրատուրայի շրջանավարտները նշանակալիորեն ավելի բարձր էին գնահատում* նշված կրթական բաղադրիչները, ապա 2019թ. իրավիճակը փոխվեց: *Բակալավր* շրջանավարտների գնահատականների *աճման*, իսկ *մագիստրոս* շրջանավարտների գնահատականների *նվազման* պարագայում տարբերությունները դարձել են **ոչ նշանակալի** 2019թ.

Գծապատկեր 4.2.1.

Շրջանավարտների գոհունակությունը ֆակուլտետի ղեկավարությունից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականների միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.տե՛ս գծապատկեր 4.2.2:

Գծապատկեր 4.2.2.

Շրջանավարտների ֆակուլտետի ղեկավարությունից գոհունակության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ. ըստ ֆակուլտետների



Պետք է նշել, որ *ֆակուլտետի ղեկավարության* վերաբերյալ շրջանավարտների տեղեկացվածության մակարդակը բավականին բարձր է: Առանձնանում են միայն 2018թ. ***ՏՏ կենտրոնի*** 5,3% և 2019թ. ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետների 7,7% ***չկողմնորոշված*** շրջանավարտներ:

4.3. Գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.3.1): Պետք է նշել, որ գնահատականների տարբերությունները և՛ 2018թ., և՛ 2019թ.-ին **նշանակալի են** և ընդ որում *մագիստրատուրայի շրջանավարտները նշանակալիորեն ավելի բարձր են գնահատում* նշված կրթական բաղադրիչները: Պետք է նշել նաև, որ *բակալավրների* գնահատականները որոշ չափով *նվազել* են, իսկ *մագիստրոսներինը՝ աճել* են:

Գծապատկեր 4.3.1.

Շրջանավարտների գոհունակությունը պրոֆեսորադասախոսական կազմից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականներ միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.տե՛ս գծապատկեր 4.3.2:

Գծապատկեր 4.3.2.

Շրջանավարտների պրոֆեսորադասախոսական կազմից գոհունակության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ. ըստ ֆակուլտետների



Պրոֆեսորադասախոսական կազմից ավանդաբար գոհ են ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի, Ռուս բանասիրության, Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտները: Իսկ համեմատաբար դժգոհ են ավանդաբար ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտներ, ինչպես նաև ***Ֆիզիկայի, Կենսաբանության*** և ***Քիմիայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

Պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը նման է *ֆակուլտետի ղեկավարության աշխատանքի* վերաբերյալ կողմնորոշվածությանը. տեղեկացվածության մակարդակը բավականին բարձր է: Առանձնանում են միայն 2018թ. ***ՏՏ կենտրոնի*** 5,3% և 2019թ. ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետների 7,7% ***չկողմնորոշված*** շրջանավարտներ:

4.4. Գոհունակությունը ուսանողական կառույցներից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.4.1), տարբերությունները 2018թ. **նշանակալի չէին**: 2019թ. բակալավրների գոհունակությունը *ուսանողական կառույցներից նվազել է,* իսկ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ *աճել* է, և 2019թ. *մագիստրոս շրջանավարտները նշանակալիորեն ավելի բարձր են գնահատում ուսանողական կառույցների աշխատանքը, քան բակալավրները*:

Ինչպես նշել ենք, այդ գնահատականներն առանձնանում են շրջանավարտների ցածր տեղեկացվածությամբ. շատերը չեն կարողացել գնահատել այդ կառույցները:

Գծապատկեր 4.4.1.

Շրջանավարտների գոհունակությունը ուսանողական կառույցներից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականներ միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.տե՛ս գծապատկեր 4.4.2:

Գծապատկեր 4.4.2.

Շրջանավարտների ուսանողական կառույցներից գոհունակության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ. ըստ ֆակուլտետների



Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ գնահատականները նվազել են, բացառությամբ ***Ռուս բանասիրության, Քիմիայի*** և ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների։

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա։

Ինչպես տեսնում ենք, *ուսանողական կառույցների* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը *ցածր* է։

Աղյուսակ 4.4.1.

Ուսանողական կառույցներին գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	13.2%	20.0%
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	13.2%	15.1%
Ֆիզիկայի	15.7%	13.8%
Ռադիոֆիզիկայի	11.2%	30.8%
Քիմիայի	7.3%	4.0%
Կենսաբանության	11.5%	19.0%
Աշխարհագրության և երկրաբանության	5.1%	17.4%
Պատմության	11.2%	5.3%
Միջազգային հարաբերությունների	13.9%	16.4%
Տնտեսագիտության և կառավարման	10.0%	15.3%
Փիլիսոփայության և հոգեբանության	8.1%	11.0%
Սոցիոլոգիայի	7.9%	9.1%
Հայ բանասիրության	4.5%	15.8%
Ժուռնալիստիկայի	8.3%	6.8%
Ռուս բանասիրության	7.0%	
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	12.2%	22.4%
Արևելագիտության	16.9%	18.2%

Իրավագիտության	**11.5%**	**15.5%**
Աստվածաբանության	**24.1%**	
ՏՏ կենտրոն	**26.3%**	
ԵՈՒ կենտրոն	**25.0%**	**20.0%**
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ		
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն		
Ֆարմացիայի ինստիտուտ	**9.6%**	**5.9%**
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	**6.3%**	**5.7%**

4.5. Գոհունակությունն ուսանողներին արձագանքելու ընթացակարգից

Ստորև ներկայացված են գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի (տե՛ս գծապատկեր 4.5.1), գնահատականների տարբերությունները ըստ կրթական աստիճանի 2018թ. և 2019թ. **նշանակալի են,** մագիստրոսները ավելի բարձր են գնահատել *ուսանողներին արձագանքելու ընթացակարգը*: 2019թ. բավարարվածությունը *նվազել է* բակալավրների շրջանավարտների մոտ, սակայն աճել է մագիստրոսների շրջանավարտների շրջանում:

Ինչպես նշել ենք, *ուսանողներին արձագանքելու ընթացակարգի* բնութագրիչներն առանձնանում են շրջանավարտների ցածր տեղեկացվածությամբ. շատերը չեն կարողացել գնահատել այդ կառույցները:

Գծապատկեր 4.5.1

Շրջանավարտների գոհունակությունը ուսանողներին արձագանքելու ընթացակարգից ըստ կրթական աստիճանի



Ըստ ֆակուլտետների գնահատականների միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ.տե՛ս գծապատկեր 4.5.2:

Գծապատկեր 4.5.2.

Շրջանավարտների ուսանողներին արձագանքելու ընթացակարգից գոհունակության միջին արժեքների փոփոխությունները 2018թ.-2019թ. ըստ ֆակուլտետների



Պետք է նշել, որ *ուսանողներին արձագանքելու ընթացակարգի* համեմատաբար *ցածր* գնահատականներով են առանձնանում ***Տնտեսագիտության և կառավարման, Հայ բանասիրության*** ֆակուլտետների և ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի*** շրջանավարտները: Իսկ համեմատաբար ավելի բարձր գնահատականներով են առանձնանում 2019թ. ***Ռադիոֆիզիկայի***, ***Արևելագիտության*** և ***Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:

Ստորև ներկայացված է ***չպատասխանած*** շրջանավարտների բաշխումը ըստ ֆակուլտետների և առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ այդ թիվը նշանակալիորեն ազդել է պատասխանների հուսալիության վրա:

Աղյուսակ 4.5.1.

Ուսանողներին արձագանքելու ընթացակարգին գնահատական չտվող շրջանավարտների բաշխումներն ըստ ֆակուլտետների 2018թ. - 2019թ.

	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	14.0%	22.5%
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	10.6%	16.1%
Ֆիզիկայի	15.0%	21.4%
Ռադիոֆիզիկայի	10.7%	19.2%
Քիմիայի	4.9%	4.0%
Կենսաբանության	8.2%	11.9%
Աշխարհագրության և երկրաբանության	6.0%	13.2%
Պատմության	10.0%	10.5%
Միջազգային հարաբերությունների	7.8%	8.2%
Տնտեսագիտության և կառավարման	11.4%	13.0%
Փիլիսոփայության և հոգեբանության	5.5%	3.4%
Սոցիոլոգիայի	8.4%	
Հայ բանասիրության	5.7%	16.5%
Ժուռնալիստիկայի	9.9%	4.7%
Ռուս բանասիրության	3.6%	9.1%

Եվրոպական լեզուների և հաղորդակցության	7.6%	8.2%
Արևելագիտության	12.2%	16.3%
Իրավագիտության	12.5%	16.1%
Աստվածաբանության	22.0%	
ՏՏ կենտրոն	21.1%	
ԵՈՒ կենտրոն		
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	20.0%	
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն		
Ֆարմացիայի ինստիտուտ	8.9%	6.0%
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	7.8%	4.3%

Ինչպես տեսնում ենք, *ուսանողներին արձագանքելու ընթացակարգի* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը *ցածր* է, բացառություն են կազմում ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները, որոնք ավելի տեղեկացված են *ուսանողներին արձագանքելու ընթացակարգի* վերաբերյալ:

4.6. Կոռուպցիայի հնարավոր դրսևորումները

Կոռուպցիայի դրսևորումները հետազոտությունում ուսումնասիրվել են 2 հիմնական դրսևորումներով.

- կաշառքի միջոցով գնահատականի ստացում,
- մասնավոր վճարովի պարապմունքների միջոցով գնահատականի ստացում:

Կոռուպցիայի դրսևորումների տոկոսային ցուցանիշը չի գերազանցում 2,5 %-ը 2018թ. և 2,0% 2019թ.: Կաշառքի շնորհիվ ստացված գնահատականների դեպքերը ողջ ուսումնառության ընթացքում չեն գերազանցում 1.6% (2018թ.) և 0.4% (2019թ.); վճարովի պարապմունքների շնորհիվ ստացված գնահատականների դեպքերը ողջ ուսումնառության ընթացքում չեն գերազանցում 2.5% (2018թ.) և 1.9% (2019թ.):

Այս դեպքում *չպատասխանող* հարցվողների թիվը չի գերազանցում 5%-ը:

Պետք է նշել, որ 2018 – 2019 թ.թ. մագիստրատուրայում և բակալավրիատում *կաշառքի դեպքերի* առկայությունը *նշանակալիորեն չի տարբերվում*:

Գծապատկեր 4.6.1-ում ներկայացված են կաշառքի միջոցով գնահատականի ստացման դեպքերի տոկոսային հարաբերություններն ըստ կրթական աստիճանի 2018թ. և 2019թ.:

Գծապատկեր 4.6.1.

Կաշառքի միջոցով գնահատականի ստացման դեպքերի տոկոսային հարաբերություններն ըստ կրթական աստիճանի 2018թ. և 2019թ.



Ինչպես տեսնում ենք Գծապատկերից 2019թ.-ին *կաշառքի դեպքերը* կտրուկ *նվազել* են; ի դեպ աննշան փոխվել է կաշառքի դեպքերի բաշխումն ըստ կրթական աստիճանի: 2018թ.-ին *մագիստրատուրայում* կաշառքի դեպքերի թիվը ավելի քիչ է, քան *բակալավրիատում*, սակայն 2019թ.-ին *մագիստրարուրայում* աննշան ավելի բարձր է դարձել այդ տոկոսը:

Գծապատկեր 4.6.2-ում ներկայացված են *մասնավոր վճարովի պարապմունքների* միջոցով գնահատականի ստացման դեպքերի տոկոսային հարաբերություններն ըստ կրթական աստիճանի 2018թ. և 2019թ:

Նշենք, որ 2018թ. *մագիստրատուրայում* **նշանակալիորեն** ավելի *ցածր* մակարդակի դեպքեր են գրանցվել, քան բակալավրիատում, իսկ 2019 թ. տարբերությունները դարձել են **ոչ նշանակալի**:

Մասնավոր պարապմունքների առկայության դեպքերը 2019թ. աննշան *աճել* են *մագիստրատուրայում*, իսկ *բակալավրիատում* դրանք *նվազել* են:

Գծապատկեր 4.6.2.

Մասնավոր վճարովի պարապմունքների միջոցով գնահատականի ստացման դեպքերի տոկոսային հարաբերություններն ըստ կրթական աստիճանի 2018թ. և 2019թ:



Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կրթական աստիճանը վիճակագրորեն նշանակալի էր 2018թ.-ին միայն մեկ դեպքում. այն է՝ մասնավոր վճարովի պարապմունքների առկայության համար, իսկ մնացած դեպքերում 2018թ.-ին և 2019թ.-ին բակալավրիատում և մագիստրատուրայում նշանակալի տարբերություններ չեն արձանագրվել:

Առավել նշանակալի գործոն է հանդիսանում ֆակուլտետը:

Ստորև բերվում է կոռուպցիայի դեպքերի բաշխումները 2018թ. և 2019թ.՝ ըստ ֆակուլտետների:

Աղյուսակ 4.6.1.

Կաշառքի միջոցով գնահատականի ստացման դեպքերի տոկոսային հարաբերություններն ըստ ֆակուլտետների 2018թ. և 2019թ.

	Կաշառքի առկայությունը գնահատման գործընթացում	
	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	1.6%	
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	1.3%	
Ֆիզիկայի		
Ռադիոֆիզիկայի	**6.0%**	
Քիմիայի	**7.1%**	
Կենսաբանության		
Աշխարհագրության և երկրաբանության	0.6%	
Պատմության	3.1%	
Միջազգային հարաբերությունների	1.4%	
Տնտեսագիտության և կառավարման	1.5%	1.2%
Փիլիսոփայության և հոգեբանության	0.6%	0.7%
Սոցիոլոգիայի	0.6%	**9.1%**
Հայ բանասիրության	2.5%	
Ժուռնալիստիկայի	2.5%	
Ռուս բանասիրության	1.8%	
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	0.6%	
Արևելագիտության	0.7%	
Իրավագիտության	2.2%	0.5%
Աստվածաբանության		
ՏՏ կենտրոն		

ԵՈՒ կենտրոն		
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ		
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն		
Ֆարմացիայի ինստիտուտ	3.8%	
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն		1.4%
Ընդամենը	1.6%	0.4%

Աղյուսակ 4.6.2.

Մասնավոր վճարովի պարապմունքների միջոցով գնահատականի ստացման դեպքերի տոկոսային հարաբերություններն ըստ ֆակուլտետների 2018թ. և 2019թ.

	Մասնավոր պարապմունքների առկայությունը	
	2018թ.	2019թ.
Մաթեմատիկայի և մեխանիկայի	2.2%	
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	2.2%	4.3%
Ֆիզիկայի	0.9%	3.4%
Ռադիոֆիզիկայի	**7.5%**	4.0%
Քիմիայի	**7.3%**	**8.3%**
Կենսաբանության	2.0%	4.8%
Աշխարհագրության և երկրաբանության	0.9%	
Պատմության	1.4%	
Միջազգային հարաբերությունների	1.5%	**5.4%**
Տնտեսագիտության և կառավարման	**5.5%**	2.5%
Փիլիսոփայության և հոգեբանության	0.6%	1.4%
Սոցիոլոգիայի		
Հայ բանասիրության	1.9%	

Ժուռնալիստիկայի	4.1%	
Ռուս բանասիրության	1.8%	9.1%
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	2.9%	2.0%
Արևելագիտության	**6.1%**	
Իրավագիտության	2.5%	0.9%
Աստվածաբանության		
ՏՏ կենտրոն		
ԵՈՒ կենտրոն		
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ		
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն		
Ֆարմացիայի ինստիտուտ	3.2%	1.4%
Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն		
Ընդամենը	2.5%	1.9%

Աղյուսակում առանձնացված են այն ֆակուլտետները, որտեղ կոռուպցիայի դեպքերը նշանակալի թիվ են կազմում (>5%)։

Ընդհանուր կոռուպցիայի դեպքերի քանակի փոփոխությունները 2018թ. - 2019թ. ըստ ֆակուլտետների երևում են Աղյուսակ 4.6.3-ում։

Աղյուսակ 4.6.3.

Կոռուպցիայի դեպքերի ընդհանուր քանակն ըստ ֆակուլտետների 2018թ. և 2019թ.

Ֆակուլտետ	2018թ.	2019թ.
Տնտեսագիտության և կառավարման	28	9
Ռադիոֆիզիկայի	18	1
Եվրոպական լեզուների և հաղորդակցության	18	1
Միջազգային հարաբերությունների	14	8
Պատմության	13	0
Իրավագիտության	13	3
Ֆարմացիայի ինստիտուտ	11	0
Արևելագիտության	10	0
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	8	4
Ժուռնալիստիկայի	8	0
Մաթեմատիկայի և մեխանիկայի	7	0
Հայ բանասիրության	7	0
Քիմիայի	6	2
Աշխարհագրության և երկրաբանության	5	0
Կենսաբանության	2	2
Փիլիսոփայության և հոգեբանության	2	3
Ռուս բանասիրության	2	1
Ֆիզիկայի	1	1
Սոցիոլոգիայի	1	1
Աստվածաբանության	0	0
ՏՏ կենտրոն	0	0
ԵՈՒ կենտրոն	0	0
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	0	0
Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն	0	0

Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոն	0	2
Ընդամենը	**174**	**38**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակից, ընդհանուր առմամբ փոփոխվել է կոռուպցիայի դեպքերի քանակը, 2019թ.-ին այն խիստ նվազել է:

§5. ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը

Ընդհանուր առմամբ շրջանավարտները բարձր են գնահատում ԵՊՀ-ում ստացած կրթությունը, ըստ որի՝ գնահատականները համասեռ են, միջին արժեքը 2018թ. կազմել է 4,29 միավոր, նույն արժեքը արձանագրվել է 2019թ.՝ 4,29 միավոր: ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականների բաշխումը տե՛ս Գծապատկեր 5.1-ում:

Գծապատկեր 5.1.

ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը



Նշենք սակայն, որ 2018թ. և 2019թ. այս հարցում չկողմնորոշված շրջանավարտների տոկոսը ցածր էր (տե՛ս Գծապատկեր 5.1), այսինքն այս հարցում շրջանավարտները հիմնականում կողմնորոշված են:

Հետաքրքրական է, որ ըստ կրթական աստիճանի 2019թ. տարբերությունները **նշանակալի** են և՛ 2018թ., և՛ 2019թ.: Այսինքն, *մագիստրոսները* նշանակալի ավելի *գոհ* են, քան *բակալավրները*: Նշենք, որ էական գնահատականների փոփոխություն չի արձանագրվել, չնայած, որ բակալավրների գնահատականները աննշան իջել են, իսկ մագիստրոսներինը՝ աննշան բարձրացել:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության բաշխումը ըստ կրթական աստիճանի տե՛ս գծապատկեր 5.2-ում:

Գծապատկեր 5.2.

Շրջանավարտների բավարարվածությունը ԵՊՀ-ում ստացած կրթությունից ըստ կրթական աստիճանի



Նշենք, որ *ֆակուլտետը* հիմնական գործոն է հանդիսանում ևս այս գնահատականների համար: ԵՊՀ-ում ստացած կրթության միջին գնահատականների բաշխման փոփոխություններն ըստ ֆակուլտետների տե՛ս Գծապատկեր 5.3-ում:

Գծապատկեր 5.3.

ԵՊՀ-ում ստացած կրթության միջին գնահատականների փոփոխությունները ըստ ֆակուլտետների 2018թ. և 2019թ.



Ինչպես երևում է Գծապատկերում ներկայացված տվյալներից, ընդհանուր օրինաչափությունները, որոնք արձանագրվել էին վերը ներկայացված գնահատականների փոփոխություններում, առկա են նաև ԵՊՀ-ում ստացած կրթության ընդհանուր բավարարվածության գնահատականներում:

Այն ֆակուլտետների շարքին, որոնց շրջանավարտները բարձր բավարարվածության աստիճան են դրսևորում, կարող ենք դասել ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնը***, ***Հայագիտության հետազոտությունների ինստիտուտը, Քիմիայի, Աստվածաբանության*** և ***Իրավագիտության*** Ֆակուլտետները:

Համեմատաբար ցածր գոհունակություն են դրսևորել ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Ֆիզիկայի*** Ֆակուլտետների, ***ԵՈՒ և ՏՏ կենտրոնների*** շրջանավարտները:

Պետք է նշել նաև, որ ընդհանուր առմամբ շրջանավարտները խորհուրդ կտան ընկերներին սովորել ԵՊՀ-ում: Դրական դիրքորոշում ունեցողների տոկոսը աճել է 2019թ.-ին:

Գծապատկեր 5.4.

Շրջանավարտների կողմից շրջապատին ԵՊՀ-ում կրթություն ստանալ խորհուրդ տալու բաշխումը 2018թ. և 2019թ.



Ըստ կրթական աստիճանի շրջանավարտների կարծիքները նրանց շրջապատին ԵՊՀ-ում սովորելու խորհուրդ տալու վերաբերյալ բաշխվել են հետևյալ կերպ։

Գծապատկեր 5.5.

Շրջապատին ԵՊՀ-ում կրթություն ստանալու խորհուրդ տալու բաշխումը ըստ կրթական աստիճանի



Ե՛վ 2018թ., և՛ 2019թ. տարբերությունները եղել են **նշանակալի**. *մագիստրոս* շրջանավարտները ավելի դրական դիրքորոշումներ ունեն ԵՊՀ-ի կրթության վերաբերյալ: Ընդ որում գնահատականները դարձել են ավելի *դրական* և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում:

Ըստ ֆակուլտետների շրջանավարտների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ /տես Գծապատկեր 5.6/:

Ինչպես տեսնում ենք Գծապատկերից առավել գոհ են ԵՊՀ կրթությունից ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի, Հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Աստվածաբանության*** ֆակուլտետի***, Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի*** շրջանավարտները:

Համեմատաբար դժգոհ են ***ԵՈՒ կենտրոնի, Ֆիզիկայի***, ***Տնտեսագիտության, Կենսաբանության և Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտները:

Գծապատկեր 5.6.

Շրջապատին ԵՊՀ-ում կրթություն ստանալու խորհուրդ տալու ցանկացող շրջանավարտների տոկոսը ըստ ֆակուլտետների 2018թ. և 2019թ.



Ամփոփում

- **2018 թ.** հարցմանը մասնակցել են գլխավոր համախմբության 95%-ը շրջանավարտներ, ընտրանքային համախմբության տարբերությունը գլխավոր համախմբությունից ըստ ֆակուլտետներ կազմում է ոչ ավել, քան 0,5%, իսկ ընտրանքի սխալը հավանականային ընտրանքի դեպքում չի գերազանցի 0,04%:

- **2019թ.** հարցմանը մասնակցել են գլխավոր համախմբության 34,8%-ը: Ընտրանքը կարելի է բնութագրել, որպես *կամավոր շրջանավարտների* ընտրանք: Կամավորների բաշխումն ըստ ֆակուլտետների շեղված է, շեղման սխալը հասնում է 9,5%:

- *Կամավորների ընտրանքը* բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով. գերակշռում է *իգական* սեռի ընդգրկվածությունը, *մագիստրոսների*, իսկ *բակալավրիատում՝* ուսումը շարունակել ցանկացողների, ավելի շատ *մասնագիտությամբ աշխատող* շրջանավարտների, նաև խումբը առանձնանում է ավելի *բարձր առաջադիմությամբ*:

- Ընդհանուր առմամբ ԵՊՀ շրջանավարտները բավարարված են ԵՊՀ-ում ստացված կրթությունից: Միջինում գնահատականները տատանվում են 4 «լավ» միավորի և 5 «գերազանց» միավորի միջակայքում:

- 2018թ. վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում ավելի շատ են բավարարված կրթության տարբեր բաղադրիչներից *հեռակա համակարգով* սովորող շրջանավարտները: Նաև *արական* սեռի ներկայացուցիչները հիմնականում առանձնանում են *ԵՊՀ ինֆրակառուցվածքին* վերաբերող ավելի բարձր գնահատականներով: Բարձր առաջադիմություն դրսևորող շրջանավարտները որոշ բաղադրիչների նկատմամբ դրսևորում են ավելի քննադատական վերաբերմունք[8]:

[8] Կապերի նշանակալիությունը ստուգվել է Կրամերի գործակցի օգնությամբ 0,05 նշանակալիության մակարդակի համար:

- Վերլուծելով գնահատականների բնույթը՝ անհրաժեշտ է նշել, որ **ֆակուլտետը** գերակշիռ ազդեցություն ունի բոլոր տրված գնահատականների վրա: Ընդ որում, գնահատականների համար առավել արտահայտված է այսպես կոչված «*արձագանքի էֆեկտը*», երբ խմբի ներսում տրվում են միանման գնահատականներ: Այդ առումով արձանագրվել է հետաքրքիր մի օրինաչափություն. որոշ ֆակուլտետների շրջանավարտները հակված են տալ ընդհանուր առմամբ ավելի բարձր գնահատականներ, իսկ որոշ ֆակուլտետների շրջանավարտները՝ համեմատաբար ավելի ցածր գնահատականներ: Այսինքն՝ ըստ շրջանավարտների գնահատականների ֆակուլտետները կարելի է պայմանականորեն բաժանել 3 հիմնական քլաստերների. «***բավարարված***» ֆակուլտետներ, «***չբավարարված***» ֆակուլտետներ և «***միջին դիրք զբաղեցնող***» ֆակուլտետներ:

Ընդ որում, ըստ ընդհանուր վերլուծության արդյունքում «*բավարարված*» ֆակուլտետների դասին կարող ենք վերագրել.

- ✓ ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը,***
- ✓ ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնը,***
- ✓ ***Աստվածաբանության ֆակուլտետը,***
- ✓ ***Իրավագիտության ֆակուլտետը***:

«*Չբավարարված*» ֆակուլտետների դասին են պատկանում.

- ✓ ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը,***
- ✓ ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոն,***
- ✓ ***ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնը,***
- ✓ ***Կենսաբանության ֆակուլտետը***:

Մնացած ֆակուլտետները պատկանում են «միջին» դասին, բնութագրվում են տարաբնույթ գնահատականներով:

<u>Ուսումը շարունակելու ցանկություն</u>

- Շրջանավարտները բնութագրվում են ապագայում կրթություն ստանալու ցանկությամբ. 54.5% (ըստ 2018թ. արդյունքների) և 58.3% (ըստ 2019թ. արդյունքների) պատրաստվում են շարունակել ուսումը:

- Ուսումը շարունակելու ցանկացողների տոկոսը գոյանում է հիմնականում *բակալավրիատի* շրջանավարտների պատասխաններից. *բակալավրիատն* ավարտածների գերակշռող մեծամասնությունը (63% և 73.1% համապատասխանաբար 2018թ. և 2019թ.) ձգտում է շարունակել ուսումը:
- *Մագիստրատուրան* ավարտածների համար այդ թիվը կազմում է 34.7% և 34,1% համապատասխանաբար 2018թ. և 2019թ.
- Ուսումը շարունակելու առավել բարձր ցանկություն են դրսևորել ***ԵՈՒ կենտրոնի***, ***Իրավագիտության*** և ***Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտները:
- ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի*** շրջանավարտները առանձնանում են ուսումը շարունակելու համեմատաբար *ցածր* ցանկությամբ:

<u>Աշխատաշուկայում ներգրավվածություն</u>

- Մասնագիտությամբ աշխատող ուսանողների կշիռը՝ ի համեմատ ոչ մասնագիտությամբ աշխատողների *ավելացել* է մոտ 6%-ով 2018-ից 2019թ.թ.
- 2018թ. *բակալավրիատում* աշխատաշուկայում առավել ընդգրկված են եղել ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները, առավել ցածր էին ընդգրկված ***Հայ բանասիրության*** ֆակուլտետի բակալավր շրջանավարտները:
- *Մագիստրատուրայի* շրջանավարտներից առավել ընդգրկված էին ***ՏՏ կենտրոնի*** և ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները: Առավել ցածր ընդգրկվածությունը են դրսևորել ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի*** շրջանավարտները:
- ***Ժուռնալիստիկայի ֆակուլտետի*** և՛ բակալավր, և՛ մագիստրոս շրջանավարտների աշխատաշուկայում ներգրավվածության թիվը բավականին նվազել է 2019թ. /ընդ որում մագիստրոսների համար՝ ավելի տեսանելի նվազում է արձանագրվել/:

<u>Աշխատաշուկայում մասնագիտացվածության աստիճանը</u>

- **2018թ.** *հեռակա* համակարգի շրջանավարտների կեսից ավելին ընդգրկված է աշխատաշուկայում, սակայն նրանց գերակշռող մասը չի աշխատում մասնագիտությամբ:
- **2018թ.** առավել «մասնագիտացված» էին աշխատում ***ՏՏ կենտրոնի*** և ***Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետի, ինչպես նաև ***Ֆարմացիայի ինստիտուտի*** շրջանավարտները. մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը զգալիորեն գերակշռում է այլ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվին:
- **2018թ.** առավել քիչ են «մասնագիտացված» ***Հայագիտության հետազոտությունների կենտրոնի, Միջազգային հարաբերությունների, Աստվածաբանության*** ֆակուլտետների աշխատող շրջանավարտները /այդ միտումը բավականին կայուն բնույթ է կրում/:

- Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ շրջանավարտներն ավելի շատ են բավարարված *ԵՊՀ միջավայրից*, որտեղ ընդգրկված են ինչպես ԵՊՀ, այնպես էլ ֆակուլտետների ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողական կառույցները և այլն: Համեմատաբար քիչ են բավարարված շրջանավարտները *ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից*. Իսկ բավարարվածությունը *կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսուցման գործընթացի կազմակերպումից* զբաղեցնում է ընդհանուր առմամբ միջին դիրքը, չնայած, որ 2018թ.-ից սկսած ***կրթական ծրագրերի*** որոշ բաղադրիչներից գոհունակությունը, այն է՝ *օտար լեզուների իմացությունը* և *գործնական հմտություններից բավարարվածությունը* բավականին *նվազել* է: Նույնը վերաբերում է ***ԵՊՀ միջավայրի*** *ԵՊՀ ղեկավարության* բաղադրիչից գոհունակությանը:

<u>Կրթական գործընթացներից բավարարվածությունը</u>

- *Տեսական գիտելիքներից, գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից, ղեկավարի աշխատանքից* գոհունակությունը *աճել* է *բակալավր* շրջանավարտների շրջանում:
- Մնացած բոլոր բաղադրիչներով *բակալավրների* գնահատականները *նվազել* են:
- Գրեթե բոլոր բաղադրիչներով *մագիստրոսների* գնահատականները նշանակալիորեն *բարձր* են *բակալավրիատի* շրջանավարտների գնահատականներից: Բացառություն են կազմում *գիտելիքների գնահատականների օբյեկտիվությունը* և *պրակտիկաների օգտակարությունը*, որտեղ բակալավրները դրսևորում են ավելի *բարձր* բավարարվածություն:
- Ամենաբարձր գնահատականը տվել են շրջանավարտները *գիտական ղեկավարի աշխատանքին*:
- Ավանդաբար բարձր են գնահատել շրջանավարտները *տեսական գիտելիքները,* ապա *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությանը* և *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը:*
- Առավել խնդրահարույց են *օտար լեզուների իմացության* և *գործնական հմտությունների* գնահատականներ, ինչը ևս պահպանում է նախորդ հետազոտություններում արձանագրված միտումները:
- *Մասնագիտական կարողություններից* համեմատաբար առավել բավարարված են ***Պատմության*** ֆակուլտետի շրջանավարտները, իսկ համեմատաբար դժգոհ են ***Ֆիզիկայի*** և ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:
- *Իրական սեռի* ներկայացուցիչները, ինչպես նաև *հետակա* համակարգով սովորող շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *մասնագիտական կարողությունները:*
- ***Ռուս բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները դրսևորել են *տեսական գիտելիքներից* համեմատաբար բարձր բավարարվածություն:
- *Բարձր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *տեսական գիտելիքներ մատուցումը:* (2018թ.)

- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *գործնական հմտությունները:* (2018թ.)
- *Գործնական հմտություններից* բավականին համեմատաբար *բարձր* գոհունակություն են ցուցաբերում ***Ֆարմացիայի ինստիտուտի*** և ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները, իսկ համեմատաբար ցածր՝ ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետի շրջանավարտները:
- *Օտար լեզուների գիտելիքներից* բավարարվածության համեմատաբար բարձր աստիճան դրսևորել են մասնագիտական ֆակուլտետները, այն է՝ ***Եվրոպական լեզուների և հաղորդակցության*** ֆակուլտետի և ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտները: Խնդրահարույց է այդ բաղադրիչը ***Փիլիսոփայության և հոգեբանության, Ֆիզիկայի*** ֆակուլտետների, ինչպես նաև ***ՏՏ կենտրոնի*** շրջանավարտների համար:
- Ընդհանուր առմամբ *օտար լեզուների իմացության* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը բավականին *ցածր* է:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *օտար լեզուների իմացությունը:* (2018թ.)
- *Հաճախած գործընթացների օգտակարությունից* բավարարվածությամբ առանձնանում են ***Ֆարմացիայի ինստիտուտի*** շրջանավարտները: Խնդրահարույց է այդ բաղադրիչը ***Ֆիզիկայի*** և ***Ռադիոֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների համար:
- *Իգական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *հաճախած գործընթացների օգտակարությունը:* (2018թ.)
- Ֆակուլտետների աստիճանակարգը ըստ *պրակտիկաների օգտակարության գնահատականների* որոշ չափով փոփոխվել է: Այս հարցում գոհունակությամբ են առանձնանում ***Ֆարմացիայի ինստիտուտի***, ինչպես նաև ***Աշխարհագրության և երկրաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները:

Խնդրահարույց է այդ բաղադրիչը ***Ժուռնալիստիկայի*** և ***Արևելագիտության*** ֆակուլտետների շրջանավարտների համար:

- Ընդհանուր առմամբ *պրակտիկաների օգտակարության* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածությունը բավականին *ցածր* է:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *պրակտիկաների օգտակարությունը:* (2018թ.)
- Ըստ *գիտելիքների գնահատման օբյեկտիվության* առավել խնդրահարույց է իրավիճակը ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի, ՏՏ կենտրոնի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** և ***Ֆիզիկայի*** ֆակուլտետների շրջանավարտների շրջանում: ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի***, ինչպես նաև ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները բավականին գոհ են *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից:*
- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *բարձր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը:* (2018թ.)
- ***Քիմիայի*** ֆակուլտետի շրջանավարտները համեմատաբար դժգոհ են հենց *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից:* Իսկ հակառակը՝ ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները՝ ի տարբերություն *գիտելիքների գնահատման օբյեկտիվությանը,* ավելի գոհ են *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից:* Հետաքրքրական է, որ այն ֆակուլտետների շրջանավարտները, որոնք գնահատականների աճ են դրսևորում ավելացել են նաև ***Ռուս բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *բարձր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունը:* (2018թ.)

- Շրջանավարտների միջին բավարարվածությունը *ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից* ընդհանուր առմամբ ավելի ցածր է, քան ուսումնառությանը վերաբերող միջին բավարարվածությունը
- Առավել բարձր են գնահատել շրջանավարտները *լսարանային աշխատանքային պայմանները*: Շրջանավարտները համեմատաբար բարձր են գնահատում *գրադարանի* աշխատանքի հետ կապված տարբեր բնութագրերը:
- ***Համացանցի մատչելիությունից, համակարգչային սրահների մատչելիությունից, լաբորատորիաների կահավորումից*** և ***Կարիերայի կենտրոնի դերից*** բավարարվածության աստիճանը համեմատած այլ բնութագրիչների հետ *ցածր* է:
- Առավել դժվարություններ է առաջացնում *Կարիերայի կենտրոնի դերի, Համացանցի մատչելիության* գնահատումը:
- *Կարիերայի կենտրոնի դերի* վերաբերյալ շրջանավարտների կողմնորոշվածության մակարդակը առավել ցածր է, նաև այդ ծառայություններից և ռեսուրսներից բավարարվածության աստիճանը ևս *ամենացածրն* է՝ համեմատած մնացած միջին գնահատականների հետ:
- Հետաքրքրական է, որ *գրադարանի ծառայությունների* գնահատականներում *չկողմնորոշվածները* վերջին տարիներին *աճել* են:
- Վերլուծելով *ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից* բավարարվածության գնահատականները պետք է փաստենք, որ առանձնացվում է հետևյալ օրինաչափություն. *բակալավրիատի* շրջանավարտների մոտ գնահատականները 2019թ.-ն հիմնականում *նվազել* են՝ համեմատած 2018թ.-ի հետ, իսկ *մագիստրոսների* գնահատականները հիմնականում *աճել* են:
- *Լսարանային պայմանների* գոհունակությամբ են առանձնանում ***ԵՈՒ կենտրոնի***, ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի*** և ***Ռուս բանասիրության*** ֆակուլտետի շրջանավարտները: Մինչ դեռ այդ հարցը համեմատաբար դժգոհություն է առաջացրել ***Ֆիզիկայի*** և ***Ինֆորմատիկայի և Կիրառական մաթեմատիկայի***, ինչպես նաև ***Մասս մեդիայի գիտակրթական***

կենտրոնի շրջանավարտների մոտ: Նշենք, որ ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների մոտ այդ *լսարանական պայմանները* ավանդաբար համեմատաբար ցածր են գնահատվում:

- *Իգական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *լսարանական պայմանները:* (2018թ.)
- *Համակարգչային սրահներից* առավել բարձր գոհունակություն են ցուցաբերում ***Իրավագիտության***, ***Աստվածաբանության***, ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետի և ***ԵՈՒ կենտրոնի*** շրջանավարտները: Իսկ համեմատաբար դժգոհ են ավանդաբար ***Ֆիզիկայի*** և ***Ինֆորմատիկայի և Կիրառական մաթեմատիկայի***, ինչպես նաև ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի*** շրջանավարտները:
- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *Համակարգչային սրահները:* (2018թ.)
- ***Հայագիտության հետազոտությունների ինստիտուտի***, ***Մասս մեդիայի գիտակրթական, ԵՈՒ կենտրոնների***, նաև ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները բավարարվածության *բարձր* աստիճան են դրսևորում *համացանցի մատչելիությունից*: Իսկ համեմատաբար դժգոհ են ավանդաբար ***Ֆիզիկայի*** և ***Ինֆորմատիկայի և Կիրառական մաթեմատիկայի*** շրջանավարտները:
- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *համացանցի մատչելիությունը:* (2018թ.)
- Ինչպես նաև նախորդ հետազոտություններում, առանձնանում են ***Աստվածաբանության*** ֆակուլտետի շրջանավարտները նրանց *գրադարանի գրականության ժամանակակից լինելուց* առավել բարձր բավարարվածության մակարդակով: Իսկ ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի,*** ինչպես նաև

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի շրջանավարտները՝ առավել անբավարար մակարդակ դրսևորելով: Պետք է նշել ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտների բավարարվածության նվազումը:

- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *Կարիերայի կենտրոնի դերը*:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *լաբորատորիաների կահավորանքը:* (2018թ.)
- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *գրադարանի գրականության ժամանակակից լինելը:* (2018թ.)
- *Գրադարանի կահավորանքից* բավարարվածությամբ առանձնանում են ***Աստվածաբանության, Սոցիոլոգիայի*** ֆակուլտետների, ինչպես նաև ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի*** շրջանավարտները: Խնդրահարույց է այդ բաղադրիչը ***ԵՈՒ կենտրոնի, Ֆիզիկայի, Ժուռնալիստիկայի,*** ինչպես նաև ***Փիլիսոփայության և հոգեբանության*** ֆակուլտետների շրջանավարտների համար:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *գրադարանի կահավորանքը:* (2018թ.)
- ***Հայագիտության հետազոտությունների,*** ինչպես նաև ***Ֆարմացիայի ինստիտուտների***, ***Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտներն առանձնանում են *գրադարանում սպասարկումից* գոհունակությամբ: Հակառակ բևեռում են ***ՏՏ*** և ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնների, Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ինչպես նաև ***Ժուռնալիստիկայի*** ֆակուլտետների շրջանավարտները:
- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող*

շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *գրադարանում սպասարկումը։* (2018թ.)

- *Գրադարանի աշխատանքներից* առավել *տեղյակ* են ***Մաթեմատիկայի և մեխանիկայի*** ֆակուլտետի, ինչպես նաև ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի*** շրջանավարտները։
- Հատկանշական է, որ ***Ֆիզիկայի*** ֆակուլտետի շրջանավարտները ավանդաբար բավականին ցածր են գնահատել *լսարանային պայմանները։*

<u>ԵՊՀ միջավայրի գնահատականները</u>

- *ԵՊՀ միջավայրից* շրջանավարտների բավարարվածության աստիճանը, համեմատած մնացած գնահատականների հետ, միջինում ամենաբարձրն է, և այդ օրինաչափությունը պահպանվել է նաև 2018-2019թ.թ.:
- Ամենաբարձր գնահատականները շրջանավարտները տվել են *ֆակուլտետների ղեկավարության աշխատանքի։* Ի դեպ նախորդ տարիների հետազոտության արդյունքներով առավել բարձր գոհունակության էր արժանանում *պրոֆեսորադասախոսական կազմը։*
- ԵՊՀ ղեկավարությունից գոհունակությունը բավականին իջել է 2018թ.-ին, չնայած, որ որոշ չափով այն բարձրացել է 2019 թ.-ին սակայն ավանդական համեմատելով նախորդ տարիների գնահատականները այն բավականին իջել է։
- Ըստ գոհունակության գնահատման համեմատաբար ցածր տեղ զբաղեցնող *ուսանողական կառույցների գործունեությունը* շրջանավարտների կողմից ոչ միանշանակ են գնահատվել, ինչի մասին վկայում են միջին քառակուսային շեղումի համեմատաբար բարձր արժեքները։
- *ԵՊՀ ղեկավարությունից գոհունակության* բարձր աստիճանով առանձնանում են ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի***; ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի, Ռուս բանասիրության, Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտները; իսկ ***ՏՏ*** և ***ԵՈՒ կենտրոնների, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Փիլիսոփայության և***

հոգեբանության ֆակուլտետների շրջանավարտները առանձնացել են համեմատաբար *ցածր* գոհունակությամբ:

- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *ԵՊՀ ղեկավարությանը:* (2018թ.)
- Գրանցվել է *ֆակուլտետի ղեկավարության* գնահատականների *աճ բակալավրիատում* և *նվազում մագիստրատուրայում*:
- *Ֆակուլտետի ղեկավարությունից* առավել *գոհ* են ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի, Ռուս բանասիրության, Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտները: Հակառակ պատկերն է ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, Հայ բանասիրության, Տնտեսագիտության*** ֆակուլտետների շրջանավարտների մոտ:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *ֆակուլտետի ղեկավարությանը:* (2018թ.)
- *Պրոֆեսորադասախոսական կազմից* ավանդաբար գոհ են ***Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնի, Ռուս բանասիրության, Աստվածաբանության*** ֆակուլտետների շրջանավարտները: Իսկ համեմատաբար դժգոհ են ավանդաբար ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** ֆակուլտետների շրջանավարտներ, ինչպես նաև ***Ֆիզիկայի, Կենսաբանության*** և ***Քիմիայի*** ֆակուլտետների շրջանավարտները:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *պրոֆեսորադասախոսական կազմը:* (2018թ.)
- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *ուսանողական կառույցները:* (2018թ.)

- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *ուսանողներին արձագանքելու գործընթացը:* (2018թ.)

<u>Կոռուպցիայի հնարավոր դրսևորումները</u>

- Կաշառքի շնորհիվ ստացված գնահատականների դեպքերը ողջ ուսումնառության ընթացքում չեն գերազանցում 1.6% (2018թ.) և 0.4% (2019թ.); վճարովի պարապմունքների շնորհիվ ստացված գնահատականների դեպքերը ողջ ուսումնառության ընթացքում չեն գերազանցում 2.5% (2018թ.) և 1.9% (2019թ.):
- *Մագիստրատուրայում կաշառքի դեպքերի* առկայությունը *նշանակալիորեն չի տարբերվում* 2018 – 2019 թ.թ., չնայած որ նախորդ հետազոտություններում մագիստրատուրայում արձանագրվում էր կաշառքների ավելի ցածր մակարդակ:
- 2018թ. *մագիստրատուրայում* ***նշանակալիորեն*** ավելի *ցածր* մակարդակի *մասնավոր վճարովի պարապմունքների* միջոցով գնահատականի ստացման դեպքեր են գրանցվել, քան բակալավրիատում, իսկ 2019 թ. տարբերությունները դարձել են ***ոչ նշանակալի***:
- *Մասնավոր պարապմունքների առկայության* դեպքերը 2019թ. աննշան *աճել* են *մագիստրատուրայում*, իսկ *բակալավրիատում* դրանք *նվազել* են:
- 2018թ.-ն ***Ռադիոֆիզիկայի*** և ***Քիմիայի*** ֆակուլտետներում և 2019թ. ***Սոցիոլոգիայի*** ֆակուլտետում գրանցվել են *կաշառքի* դեպքեր՝ հարաբերված պատասխանողների թվի հետ:
- 2018թ.-ին ***Ռադիոֆիզիկայի*** և ***Քիմիայի, Տնտեսագիտության, Արևելագիտության*** ֆակուլտետներում, իսկ 2019թ.-ին ***Քիմիայի*** և ***Միջազգային հարաբերությունների*** ֆակուլտետներում գրանցվել են արտահայտված վճարովի պարապմունքների դեպքեր՝ հարաբերված պատասխանողների թվի հետ:

- ***Տնտեսագիտության և կառավարման, Ռադիոֆիզիկայի, Եվրոպական լեզուների և հաղորդակցության, Միջազգային հարաբերությունների, Պատմության Իրավագիտության, Արևելագիտության*** ֆակուլտետներում, ինչպես նաև ***Ֆարմացիայի ինստիտուտում*** 10-ից ավելի կոռուպցիայի դեպք է արձանագրվել 2018թ.-ին: Այն կտրուկ նվազել է 2019թ.-ին:
- *Արական սեռի* ներկայացուցիչները, ինչպես նաև *ցածր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *շատ* են արձանագրում *կաշառքի,* ինչպես նաև *վճարովի պարապմունքների դեպքերը:* (2018թ.)

<u>ԵՊՀ-ում կրթություն ստանալու վերաբերյալ ընդհանուր գնահատականները</u>

- Ընդհանուր առմամբ շրջանավարտները բարձր են գնահատում ԵՊՀ-ում ստացած կրթությունը, ըստ որի՝ գնահատականները համասեռ են, միջին արժեքը 2018թ. կազմել է 4,29 միավոր, նույն արժեքը արձանագրվել է 2019թ.՝ 4,29 միավոր:
- Ըստ կրթական աստիճանի 2019թ. տարբերությունները **նշանակալի** են և՛ 2018թ., և՛ 2019թ.: Այսինքն, մագիստրոսները նշանակալի ավելի գոհ են, քան բակալավրները: Նշենք, որ էական գնահատականների փոփոխություն չի արձանագրվել, չնայած, որ բակալավրների գնահատականները աննշան իջել են, իսկ մագիստրոսներինը՝ աննշան բարձրացել:
- *Հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները, ինչպես նաև *բարձր առաջադիմություն դրսևորող* շրջանավարտները նշանակալիորեն ավելի *բարձր* են գնահատում *ԵՊՀ կրթությունը:* (2018թ.)
- Շրջանավարտների 80%-ց ավել խորհուրդ կտային ստանալ ԵՊՀ-ում կրթություն:
- *Մագիստրոսները* նշանակալիորեն ավելի հակված են խորհուրդ տալ սովորել ԵՊՀ-ում, քան բակալավրները:
- Չնայած ***Մասս մեդիայի գիտակրթական կենտրոնի*** շրջանավարտների դրսևորել համեմատաբար ավելի ցածր գոհունակություն կրթական տարբեր բաղադրիչներից, այնուամենայնիվ նրանց 100%-ը խորհուրդ կտար սովորել ԵՊՀ-ում: Այս հարցում բարձր գոհունակությամբ առանձնանում են նաև

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, Աստվածաբանության, Քիմիայի Ֆակուլտետները, ***Մանկավարժության և կրթական զարգացման կենտրոնը, Ֆարմացիայի ինստիտուտը:*** Այն ֆակուլտետների շարքին, որոնց շրջանավարտները համեմատաբար ավելի քիչ են հակված այդ խորհուրդը տալ, կարելի է դասել ***ԵՈՒ կենտրոնը, Ֆիզիկայի, Տնտեսագիտության, Կենսաբանության, Արևելագիտության, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի*** Ֆակուլտետները:

- *Արական սեռի* ներկայացուցիչները, *հեռակա* համակարգով սովորող շրջանավարտները նշանակալիորեն ավելի *շատ* են հակված *խորհուրդ տալ ստանալ ԵՊՀ կրթություն:* (2018թ.)

- Այս տվյալներից ելնելով արժե ուշադրություն դարձնել ***հարցման իրականացման պայմաններին*** և ***ընթացակարգերին***, ստեղծելով այնպիսի պայմաններ, որպեսզի շրջանավարտները շահագրգռված լինեն մասնակցել հարցմանը, հակառակ դեպքում մենք ստանալու ենք կամավորների ընտրանք, ովքեր ինչ-ինչ պատճառներով կցանկանան մասնակցել հարցմանը:

- ✓ Ինչ վերաբերում է ***Հարցաթերթի*** ձևավորմանը, ապա այստեղ կարելի է առանձնացնել ֆիլտր-հարց N 3.5, որն ըստ էության չի աշխատել բոլոր հետազոտությունների ժամանակ, այն անհրաժեշտ է վերաձևակերպել:
- ✓ Հարց 2.10 արժե գնահատել մեկ սանդղակով, քանի որ նման ձևակերպմամբ միտումնավոր շեղում է ստեղծվում ղեկավարների աշխատաժամերը գնահատելու առումով:
- ✓ Հարց 2.9 բազայում արժե ձևակերպել, որպես 1 փոփոխական: